

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
«ԱԴԱՄԱՆԴ - Կ»  
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

---

«Հաստատում եմ»  
«Ադամանդ-Կ» ՍՊԸ  
գործադիր տնօրեն՝ Հ. Հակոբյան

«17» նոյեմբերի 2021թ.

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿԻ ԹԵՐՄԱԼ ԱԾԽԱԹՎԱՅԻՆ ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԻ  
ՀԱՆՔԱՎԱՅՐԻ «ՍԱՐԱՀԱՐԹԻ» ԵՎ «ԿԻՐՃԻ» ՏԵՂԱՄԱՍԵՐԻ ԹԻՎ 30/62, 24/62 ԵՎ 2/61  
ՀՈՐԱՏԱՆՑՔԵՐԻՑ ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱԿԱ  
ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԼՐԱԿԱԶՄՎԱԾ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

ք. Երևան  
2021թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ -----	4
1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ -----	6
1.1. Նախատեսվող գործունեության, ենթակառուցվածքների համառոտ նկարագրությունը -----	6
1.2. Նախագծմամ նորմատիվ-իրավական հենքը -----	9
2. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ -----	14
3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ -----	19
Ընդհանուր տեղեկություններ -----	19
Երկրաձևաբանություն, լանջերի թեքություն, արտածին երևույթներ, սեյսմիկ բնութագիր -----	19
Ջրային ռեսուրսներ -----	26
Կլիմա -----	26
Մթնոլորտային օդ -----	29
Հողաբուսական ծածկույթ -----	30
Բուսական աշխարհ -----	33
Կենդանական աշխարհ -----	36
Բնության հատուկ պահպանվող տարածքներ -----	38
Հանքավայրի պաշարները -----	43
4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ -----	47
5. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ -----	49
5.1. Ընդհանուր բնույթի միջոցառումներ -----	49
5.2. Շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված միջոցառումների ծրագիր -----	50
5.3. Հիդրոերկրաբանական մշտադիտարկումների (մոնիտորինգի) իրականացման պլան -----	52
5.4. Սանիտարական պահպանության գոտի -----	56
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ -----	58
Գրականություն -----	80

## ՆԿԱՐՆԵՐԻ ՑԱՆԿ

Նկար 1.	Վայոց ձորի մարզի ակնարկային քարտեզ: Մասշտաբ 1:500000 .....	20
Նկար 2.	Իրավիճակային հատակագիծ: Մասշտաբ 1:25000 .....	21
Նկար 3.	Իրավիճակային սխեմատիկ քարտեզ .....	22
Նկար 4.	Ջերմուկի հանքավայրի տարածաշրջանի երկրաձևաբանական սխեմատիկ քարտեզ .....	23
Նկար 5.	Ջերմուկի հանքավայրի շրջանի լանջերի թեքության սխեմատիկ քարտեզ .....	24
Նկար 6.	Ջերմուկի հանքավայրի շրջանի սողանքային մարմինների սխեմատիկ քարտեզ .....	24
Նկար 7.	ՀՀ տարածքի հավանական սեյսմիկ վտանգի գոտիավորման քարտեզ ....	25
Նկար 8.	Արփա գետի ավազանի մոնիթորինգի ցանց .....	27
Նկար 9.	Կլիմայական գոտիների տարածման սխեմատիկ քարտեզ .....	27
Նկար 10.	Հողերի բնական տիպերի տարածման քարտեզ .....	31
Նկար 11.	Բուսականության տիպերի սխեմատիկ քարտեզ .....	33
Նկար 12.	Բնության հատուկ պահպանվող տարածքների սխեմատիկ քարտեզ .....	39
Նկար 13.	Բնության հուշարձանների և հորատանցքերի տեղադիրքերի սխեմատիկ քարտեզ .....	42
Նկար 14.	Մշտադիտարկման կետերի սխեմատիկ քարտեզ .....	54

## ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

**Օգտակար հանածո՝** ընդերքում պարփակված պինդ հանքային գոյացումներ, հեղուկ կամ գազային բաղադրամասեր, այդ թվում՝ ստորերկրյա ջրեր (քաղցրահամ և հանքային) և երկրաջերմային էներգիա, ջրավազանների, ջրհոսքերի հատակային նստվածքներ, որոնց քիմիական կազմը և ֆիզիկական հատկանիշները թույլ են տալիս դրանք օգտագործել ուղղակիորեն կամ վերամշակումից հետո

**Օգտակար հանածոյի պաշարներ՝** օգտակար հանածոյի կուտակումներ, որոնց ծավալը, քանակը, որակը և տարածքային դիրքն ու ձևը որոշված են

**Հանքավայր՝** ընդերքի մաս, որը պարունակում է օգտակար հանածոյի պաշարներ (այդ թվում՝ կանխատեսումային), որոնք ստացել են երկրաբանատնտեսագիտական գնահատական

**Ջրերի պահպանում՝** ջրերի աղտոտումը և հյուծումը կանխարգելող ու վերացնող միջոցառումներ

**Սանիտարական պահպանման գոտի՝** բնակչության՝ խմելու, առողջապահական, կոմունալ, կենցաղային սպասարկման, բուժիչ, կուրորտային և առողջարարական կարիքների պահանջների բավարարման նպատակով օգտագործվող ջրային ռեսուրսների պահպանման գոտի

**Ստորերկրյա ջրեր՝** ջուր (արտեզյան, գրունտային, բնաղբյուր), որը գտնվում է երկրակեղևը կազմող ապարների մեջ հեղուկ կամ գոլորշի կամ կարծր վիճակում

**Ստորերկրյա քաղցրահամ ջրեր՝** մինչև 1գ/լ հանքայնացմամբ ջրեր

**Ստորերկրյա հանքային ջրեր՝** բարձր հանքայնացմամբ (1գ/լ-ից ավելի) ջրեր, որոնք պարունակում են առանձնահատուկ միկրոբաղադրիչներ: Հանքային ջրերը գլխավորապես օգտագործվում են առողջարանային բուժման համար և որպես սեղանի զովացուցիչ ջրեր

**Ռեկուլտիվացիոն աշխատանքներ՝** օգտակար հանածոների արդյունահանման նախագծով կամ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության ծրագրով շրջակա միջավայրի պահպանության նպատակով նախատեսված ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի վերականգնմանն ուղղված (անվտանգ կամ օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումներ

**Ազդակիր համայնք՝** շրջակա միջավայրի վրա հիմնադրության փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք

**Շրջակա միջավայր՝** բնական և մարդածին տարրերի (մթնոլորտային օդ, ջրեր, հողեր, ընդերք, լանդշաֆտ, կենդանական ու բուսական աշխարհ, ներառյալ՝ անտառ, բնության

հատուկ պահպանվող տարածքներ, բնակավայրերի կանաչ տարածքներ, կառույցներ, պատմության և մշակույթի հուշարձաններ) և սոցիալական միջավայրի (մարդու առողջության և անվտանգության), գործունեների, նյութերի, երևույթների ու գործընթացների ամբողջությունը և դրանց փոխազդեցությունը միմյանց ու մարդկանց միջև

**Շրջակա միջավայրի վրա ազդեցություն**՝ հիմնադրությամբ փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա հնարավոր փոփոխությունները

**Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված փաստաթղթերի փաթեթ

**Բնապահպանական կառավարման պլան**՝ ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ և դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչներ, որոնք հստակ են և չափելի՝ որոշակի ժամանակի ընթացքում

**Բույսերի Կարմիր գիրք**՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող բույսերի և համակեցությունների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների, ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին

**Կենդանիների Կարմիր գիրք**՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ է, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող կենդանիների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին

**Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով մշտադիտարկումներ**՝ ընդերքի երկրաբանական ուսումնասիրության և օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքային ծրագրերին զուգընթաց՝ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ծրագրով, օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքային նախագծով, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտով և ազդեցության գնահատման հաշվետվությամբ ամրագրված ցուցանիշների հիման վրա իրականացվող մշտադիտարկումներ:

# 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 1.1. Նախատեսվող գործունեության, ենթակառուցվածքների համառոտ նկարագրությունը

Ջերմուկի թերմալ ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի «Սարահարթի» և «Կիրճի» տեղամասերը գտնվում են ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայքի տարածաշրջանի Ջերմուկ առողջարանի տարածքում (տե՛ս նկար 1):

Ներկայումս «Ադամանդ-Կ» ՍՊԸ հանքային ջրի արդյունահանումը իրականացնում ՀՀ Վայոց Ձորի մարզի Ջերմուկի թերմալ ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի «Սարահարթի» տեղամասի թիվ 30/62 և 24/62 հորատանցքերից՝ համաձայն 23.11.2012թ. ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության տրամադրած արդյունահանման թույլտվության՝ ՇԱԹՎ-29/279 և ընդերքօգտագործման պայմանագրի՝ N ՊՎ-279, որի գործողության ժամկետն ավարտվում է 15.08.2022թ.:

Ընկերության թիվ 30/62 և 24/62 հորատանցքերից տարեկան տրամադրված ջրաքանակը կազմում է՝ 13000.0 մ<sup>3</sup> կամ 0.41 լ/վրկ հանքային ջուր՝ բուժական նպատակով: Այդ թվում՝ 10500.0 կամ 0.33 լ/վրկ թիվ 30/62 և 2500.0 կամ 0.08 լ/վրկ թիվ 24/62 հորատանցքից:

Ներկայումս, պահանջարկից ելնելով, ընկերությունը ցանկանում է նաև ընդլայնել իր գործունեությունը՝ հանքային ջուրը օգտագործել ռեկրացիոն (հորատանցք թիվ 2/61) և արդյունաբերական (հորատանցք թիվ 30/62) նպատակով:

Այդ հորատանցքերից հանքային ջրի արդյունահանման թույլտվություն այլ կազմակերպության չկա տրամադրված:

Ընկերության կողմից պահանջվող հանքային ջրի ընդհանուր (գումարային) ջրաքանակը կազմում է 38056.1 մ<sup>3</sup>/տարի կամ 1.21 լ/վրկ, այդ թվում՝

բուժական նպատակով - 10500.0 մ<sup>3</sup>/տարի կամ 0.33 լ/վրկ թիվ 30/62 հորատանցքից և  
2500.0 մ<sup>3</sup>/տարի կամ 0.08 լ/վրկ թիվ 24/62 հորատանցքից,  
ռեկրացիոն նպատակով (հանգստի նպատակով լողավազաններում օգտագործելու)

– 15056.1 մ<sup>3</sup>/տարի կամ 0.48 լ/վրկ թիվ 2/61 հորատանցքից,  
արդյունաբերական նպատակով – 10000.0 մ<sup>3</sup>/տարի կամ 0.32 լ/վրկ թիվ 30/62 հորատանցքից:

Ընկերությունը երկարաձգելով հանքավայրի թիվ 30/62 և 24/62 հորատանցքերի արդյունահանման իրավունքի գործողության ժամկետը, ինչպես նաև ընդլայնելով իր գործունեությունը, և իրականացնելով Ջերմուկի թերմալ ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի «Սարահարթի» և «Կիրճի» տեղամասերի թիվ 30/62, 24/62 և 2/61

հորատանցքերից հանքային ջրի արդյունահանման աշխատանքները՝ բուժական, ռեկրացիոն և արդյունաբերական նպատակով, Ընկերությունը կշարունակի ապահովել շուկայի ավելացող պահանջարկը, կպահպանի և կավելացնի գոյություն ունեցող աշխատատեղերը՝ նպաստելով Ջերմուկի համայնքի բնակչության սոցիալական պայմանների և կենսամակարդակի բարելավմանը,

Ընկերությունը հանքավայրի թիվ 30/62 հորատանցքը բուժական և արդյունաբերական նպատակներով շահագործում է 1997թ-ից: Ընկերության կողմից հանքավայրի թիվ 30/62, 24/62 և 2/61 հորատանցքերը տեխնիկապես լիարժեք կահավորված են տարբեր նպատակներով ջրամատակարարում ապահովելու համար և հանդիսանում են Ընկերության սեփականությունը:

Հարկ եմ համարում նշել, որ պահանջարկի բացակայության պատճառով (կրճատվել էր արդյունաբերական նպատակով հանքային ջուր օգտագործողների քանակը և ծավալները) Ընկերության խնդրանքով հանքավայրի թիվ 30/62 հորատանցքի արդյունաբերական (շշալցման) նպատակով տրամադրված արդյունահանման թույլտվությունը՝ ՇԱԹ-29/539 և ընդերքօգտագործման պայմանագիրը՝ N Պ-539 ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 14.08.2017թ-ի N 100-Ա հրամանով լուծարվեց:

Ներկայումս, պահանջարկից ելնելով, ընկերությունը ցանկանում թիվ 30/62 հորատանցքից նորից իրականացնել արդյունաբերական (շշալցման) նպատակով ջրամատակարարում:

Ընկերությունը բուժական նպատակով հանքային ջուրը կշարունակի տրամադրել Ջերմուկի առողջարաններին, իսկ արդյունաբերական նպատակով՝ կտրամադրի շշալցում իրականացնող ընկերություններին կնքված ջրամատակարարման պայմանագրերի հիման վրա:

Ընկերությունը ռեկրացիոն նպատակով (հանգստի նպատակով լողավազաններում օգտագործելու) հանքային ջուրը կիրականացնի հանքավայրի թիվ 2/61 հորատանցքի տարածքում գտնվող, ընկերության սեփականությունը հանդիսացող հողատարածքում կառուցված Էլիպտիդ՝ (8.0մx6.0մx1.3մ) չափսերով լողավազանում:

Հորատանցքերի հողամասերի տարածքի նպատակային նշանակությունը՝ արդյունաբերական, ընդերքի օգտագործման և այլ արտադրական նշանակության, իսկ օգտագործման նպատակը՝ հանքային ջրերի հանքավայրի շահագործում: Հողամասերի տարածքի մակերեսը կազմում է 895.0մ<sup>2</sup>, այդ թվում՝ թիվ 2/61 - 280.0մ<sup>2</sup>, թիվ 24/62 - 185.0մ<sup>2</sup>, թիվ

30/62 - 430.0մ<sup>2</sup>, որոնց վրա առկա են կառուցված արտադրական շինություններ ընդհանուր 166.32մ<sup>2</sup> մակերեսով (տես՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականը):

Հանքային ջրի հանքավայրի հորատանցքերի արդյունավետ շահագործման, դրանց պահպանման և սպասարկման համար ընկերությունը համալրված է բազմափորձ մասնագետներով:

### Լողավազանների նկարագիրը

Ընկերությունը մարդկանց հանգստի կազմակերպման համար հանքավայրի թիվ 2/61 հորատանցքի տարածքում ունի կառուցված 1 հատ Էլիպսոիդ՝ (8.0մx6.0մx1.3մ) չափսերով լողավազան, որը բարեկարգման-վերանորոգման կարիք ունի:

Ռեկրացիոն նպատակով օգտագործվող հանքային ջրի ջրօգտագործման նորմայի հաշվարկը կատարվել է այդ լողավազանի համար:

Ընկերության հանգստի նպատակով լողավազանը գործելու է տարեկան 6 ամիս (180 օր):

Հանգստացողների առավելագույն թվաքանակը դիտվում է հանգստյան սեզոնի ընթացքում:

Էլիպսոիդ լողավազանի ծավալի հաշվարկը կատարվել է հետևյալ բանաձևերով՝

$$V = 4/3 \times \pi \times A/2 \times B/2 \times C$$

Էլիպսոիդ ձևի լողավազան լցվող հանքային ջրի ծավալը կկազմի՝

$$V = 4/3 \times 3.14 \times 8.0/2 \times 6.0/2 \times 1.2 = 60.3 \text{ մ}^3$$

Լողավազանի սկզբնական լցումից հետո հանքային ջուրը ամբողջությամբ փոխում են 10 օրը մեկ անգամ, կամ առողջարանային համալիրի գործունեության ընթացքում 180 օր/10 օր = 18 անգամ: Մնացած ժամանակ պահպանվում է հանքային ջրի թույլ մշտական հոսք:

Ջրապահանջը լողավազանի սկզբնական լցման և ջրափոփոխության համար կազմում է՝  $W = (1+18) \times V = 19 \times 60.3 \text{ մ}^3 = 1145.7 \text{ մ}^3$  հանքային ջուր:

Հանքային ջրի լրիվ ջրափոխությունը կատարվում է 1 օրվա ընթացքում, կամ լողավազանների օգտագործման ժամանակահատվածում՝  $19 \times 1 \text{ օր} = 19 \text{ օր}$ :

Մշտական հոսքը պահպանվում է  $180 \text{ օր} - 19 \text{ օր} = 161 \text{ օր}$ ՝ 1.0 լ/վրկ հանքային ջրի հաշվարկից:

Թարմ հանքային ջրի տարեկան պահանջը մշտական հոսքի ստեղծման համար հավասար է՝  $W^p = 0,001 \text{ մ}^3 \times 3600 \text{ վրկ} \times 24 \text{ ժամ} \times 161 \text{ օր} = 13910.4^3/\text{տարի}$



Ընդամենը թարմ հանքային ջրի տարեկան պահանջը լողավազանի համար կազմում է՝  
 $W^{L.P.} = W + W^p = 1145.7 + 13910.4 = 15056.1 \text{ մ}^3/\text{տարի}$ ;

Լողավազանի հեռացվող հանքային ջուրը թափվելու է կոյուղու կամ Արփա գետի մեջ:

Հանքային ջրի հանքավայրի հորատանցքերի արդյունավետ շահագործման, դրանց պահպանման և սպասարկման համար ընկերությունը համալրված է բազմափորձ մասնագետներով:

Հավելված 4-ում ներկայացված է «Ադամանդ-Կ» ՍՊ ընկերության ջրամատակարարման սխեման:

## 1.2. Նախագծման նորմատիվ-իրավական հիմքերը

Շրջակա միջավայրը մարդու բնակության և արտադրական գործունեության միջավայրն է, որը պահպանության և իր վրա ազդեցության գնահատման կարիքն ունի:

Ջերմուկի թերմալ ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են հետևյալ իրավական ակտերում.

1. 2011թ. նոյեմբերի 28-ին ընդունված ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք, որով սահմանվում են ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, կարգավորվում են ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները: ՀՀ Ջրային օրենսգիրք, որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

2. ՀՀ Ջրային օրենսգիրք (ընդունված 04.06.2002), որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

3. ՀՀ Հողային օրենսգիրք (Ընդունված է 2001 թվականի մայիսի 2-ին), որը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:

4. ՀՀ Անտառային օրենսգիրք /24.10.2005թ./ , որը կարգավորում է ՀՀ անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև անտառների հաշվառման, մոնիթորինգի, վերահսկողության և անտառային հողերի հետ կապված հարաբերությունները:

5. «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ընդունված 23.11.1999 թ.), որը սահմանում է պետական քաղաքանությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:

6. «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ընդունված 03.04.2000թ.), որը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների Հայաստանի Հանրապետությունում պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքանությունը:

7. «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-121, 11.10.1994թ.), որի առարկան մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունների կարգավորումն է:

8. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-110, 21.06.2014թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները:

9. ՀՀ կառավարության 14.12.2017թ.-ի թիվ 1643-Ն որոշում, որով սահմանվում են խախտված հողերի ռեկուլտիվացմանը ներկայացվող պահանջները և խախտված հողերի դասակարգումն ըստ ռեկուլտիվացման ուղղությունների:

10. ՀՀ կառավարության 05.10.2017թ.-ի N 1267-Ն որոշում, որը կիրառվում է բնօգտագործման վճար վճարող ջրօգտագործողների կողմից ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանված պաշարների և արտադրված ածխաթթու գազի հաշվառման նպատակով ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքերի, գազաչափերի տեղադրման և կնքման, ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանված պաշարների և արտադրված ածխաթթու գազի ծավալների վերաբերյալ տվյալների արձանագրման կարգերը և ժամկետները սահմանելու ժամանակ:

11. ՀՀ կառավարության 22.11.2012թ.-ի N 1484-Ն որոշում, որը սահմանում է ստորերկրյա հանքային ջրերի հանքավայրերի շահագործման ժամանակ անհրաժեշտ ռեժիմային դիտարկումների իրականացումը, որը կապահովի ջրային ռեսուրսները սպառումից և աղտոտումից պահպանելը:

12. «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքը, որը սահմանում է ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման իրավական, տնտեսական և կազմակերպական հիմքերը:

13. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (27.11.2006թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

14. ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N 71-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը:

15. ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N 72-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բույսերի Կարմիր գիրքը,

16. ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N 967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը ըստ տեսակների և տեղադիրքի:

17. ՀՀ կառավարության 22 նոյեմբերի 2012թ.-ի «Ստորերկրյա ջրերի շահագործական պաշարների և կանխատեսումային ռեսուրսների դասակարգումը հաստատելու և ՀՀ կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N94 որոշումն ուժը կորցրած ճանաչելու

մասին » N1480-Ն որոշում, որով հաստատվել է ստորերկրյա ջրերի շահագործական պաշարների և կանխատեսումային ռեսուրսների դասակարգումը:

18. ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N 191-Ն որոշում:

19. ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի հուլիսի 31-ի «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշում:

20. ՀՀ կառավարության 14.08.200 թ.-ի N 1110-Ն որոշում, որով հաստատվել է ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը:

21. ՀՀ կառավարության 27.05.2015թ.-ի N764-Ն որոշում, որով հաստատվել է շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման և հատուցման կարգը:

22. ՀՀ կառավարության 25.01.2005թ.-ի N 91-Ն որոշում, որով հաստատվել է մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը:

23. ՀՀ կառավարության 25.01.2005թ.-ի N 92-Ն որոշում, որով հաստատվել է մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը:

24. ՀՀ կառավարության 24.12.2003թ.-ի N 1746-Ն որոշում, որով հաստատվել են ՀՀ բնակավայրերի հողերի կադաստրային գնահատման կարգը, Հայաստանի Հանրապետության բնակավայրերի հողերի տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցները և սահմանները:

25. ՀՀ առողջապահության նախարարի 29.11.2002թ.-ի N 803 հրաման, որով հաստատվել են «Խմելու տնտեսական նշանակության ջրմուղների և ջրամատակարարման աղբյուրների սանիտարական պահպանման գոտիներ» N-2III.U2-2 սանիտարական կանոնները:

26. ՀՀ առողջապահության նախարարի 10.03.2003թ.-ի N 137 հրաման, որով հաստատվել են «Խմելու հանքային ջրերի մշակմանը և շշալցմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2-III-4.1-04-2003 սանիտարական կանոնները:

27. ՀՀ կառավարության 17.09.2009թ.-ի N 1063-Ն որոշումը, որով ստեղծվել է ստեղծել Ջերմուկի ջրաբանական պետական արգելավայրը:

28. ՀՀ կառավարության 04.11.2010թ.-ի N 1430-Ն որոշում, որով հաստատվել է «Ջերմուկի ջրաբանական» պետական արգելավայրի սահմանների նկարագիրը և հատակագիծը:

## 2. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ջերմուկի թերմալ ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի «Սարահարթի» և «Կիրճի» տեղամասերը գտնվում են ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայքի տարածաշրջանի Ջերմուկ առողջարանի տարածքում:

Վայոց ձորի մարզը զբաղեցնում է պատմական Հայաստանի Սյունյաց նահանգի նույնանուն գավառի հիմնական տարածքը: Ներկայիս վարչատարածքային միավորը ձևավորվել է Հայկական ԽՍՀ-ի մաս կազմած Եղեգնաձորի և Վայքի շրջանների միավորման հետևանքով՝ 1995 թվականի փարեփոխումների արդյունքում:

Վայոց ձորի մարզը զբաղեցնում է 2308.0 կմ<sup>2</sup> տարածք: Ընդգրկում է երեք հիմնական աշխարհագրական շրջաններ՝ Արփայի գոգավորություն, Վայքի ծալքաբեկորավոր լեռնաշղթա (ձգվում է հարավում) և Վարդենիսի հրաբխային լեռնավահան: Հյուսիսում սահմանակցում է Գեղարքունիքի մարզին, հյուսիս-արևելքում՝ Արցախի Հանրապետությանը, հարավ-արևմուտքում՝ Սյունիքի մարզին, հարավային հատվածում՝ Նախիջևանին, իսկ արևմուտքում՝ Արարատի մարզին:

Վայոց ձորը Հայաստանի տնտեսապես ամենաթույլ զարգացած մարզերից մեկն է: Մարզին բնորոշ են ռեսուրսապահովվածության ցածր մակարդակը, տարածքի թույլ բնակեցվածությունը, տրանսպորտային նոսր ցանցը, տնտեսության զարգացման ցածր մակարդակը և ագրարային բնույթը, գյուղական բնակչության խիստ գերակշռությունը, տնտեսական խոշոր կազմակերպիչ կենտրոնի բացակայությունը: Արդյունաբերության և գյուղատնտեսության արտադրանքի ծավալներով հանրապետությունում գրավում է վերջին տեղերից մեկը՝ զգալիորեն զիջելով մյուս մարզերին:

Տնտեսության առաջատար ճյուղը գյուղատնտեսությունը, որի ավանդական ուղղություններից մեկն էլ խաղողագործությունն է: Ինքնին, Վայոց ձորը հանդիսանում է Հայաստանի խաղողագործական չորս շրջաններից մեկը, որը աչքի է ընկնում գինեգործության հազարամյա ավանդույթներով: «Արենի» տեսակի խաղողից այստեղ պատրաստվում է նույնանուն հանրահայտ գինին:

Վայոց ձորը աչքի է ընկնում նաև հարուստ մշակութային ժառանգությամբ և պատմական անցյալով: Հայաստանի պատմագրության մեջ Վայոց ձորն առաջին անգամ հիշատակվել է Մովսես Խորենացու կողմից՝ դեռևս հնագույն ժամանակներից ընդգրկված լինելով հայկական պետական կազմավորումների մեջ: Թռչունների քարայրում հայտնաբերված կաշվե տրեխը համարվում է մինչ օրս հայտնի ամենահին կոշիկի նմուշը:

2007-2011 թվականներին իրականացված պեղումների ընթացքում Արենիի նախնադարյան քարանձավում հայտնաբերվել է գինեգործությանը վերաբերող գտածոներ (գինու խմորման գուռեր, մզարան, պահեստային սափորներ): Ներկայումս այդ գինեգործական համալիրը համարվում է աշխարհում հնագույնը:

Վայոց ձորի մարզային տարածքում են գտնվում է նաև միջնադարյան շրջանի Թանահատի վանքը (8-րդ դար), 10-րդ դարին թվագրվող Սմբատաբերդը կամ Ջաղաց Քարի բերդը և վաղմիջնադարյան հայկական ճարտարապետության մարզարիտներից մեկը՝ Նորավանքը: Այստեղ է գտնվել նաև միջնադարյան Հայաստանի կարևորագույն ուսումնագիտական կենտրոնը՝ Գլաձորի համալսարանը:

Վայոց ձորի մարզի վարչական կենտրոնը Եղեգնաձոր համայնքն է (բնակչությունը՝ 7800 մարդ), որը հանդիսանում է նաև մարզի խոշորագույն քաղաքը: Վարչատարածքային միավորի մյուս քաղաքային բնակավայրերն են Վայքն ու Ջերմուկը: Վերջինս համարվում է զբոսաշրջային կարևոր նշանակություն ունեցող առողջարանային քաղաք: Ըստ 2019 թվականի մարդահամարի տվյալների՝ մարզի բնակչությունը կազմում է 49 հազար մարդ, որի ճնշող մեծամասնությունը հայերն են (99 % և ավելի): Վայոց ձորը համարվում է Հայաստանի ամենաքիչ և ամենանոսր բնակեցված մարզը:

Մարզի տարածքում հատնաբերվել են բազալտի, գաբրոսիտիտների, ֆելզիտային տուֆի, տրավերտինի, ոսկու, հանքային ջրերի և այլ օգտակար հանածոների պաշարներ:

Ջերմուկ առողջարանային քաղաքը գտնվում է Ջերմուկի ջրաբանական արգելավայրի տարածքում: Դա բնության հատուկ պահպանվող տարածք է Արփա գետի վերին ավազանում, 2000-2500 մ բարձրություններում: Ստեղծվել է հանքային ջրերի տաք աղբյուրների («Ջերմուկ» հանքային ջուր) սնման ավազանների պահպանության նպատակով:

Ջերմուկ քաղաքը գտնվում է մարզկենտրոնից 50.0 կմ հյուսիս-արևելք, Արփա գետի ակունքի շրջանում: Հայաստանի երեք առողջարանային քաղաքներից մեկն է: Գտնվում է Երևանից 173.0 կմ հեռավորության վրա:

Վարչական տարածքը՝ շուրջ 5,5 հազար հեկտար: Քաղաքը «Երևան-Գորիս-Ստեփանակերտ» մայրուղուց գտնվում է 24.0 կմ հեռավորության վրա:

Ջերմուկի ազգաբնակչությունը 2015 թվականի տվյալներով կազմել է 4400 բնակիչ՝ հիմնականում հայեր: Բնակչության մի մասը 1990-1991թթ. Ադրբեջանից բռնագաղթած հայեր են:

Քաղաքին է պատկանում նաև 3.0 կմ հարավ-արևմուտքում գտնվող Կեչուտ գյուղը: 2016 թվականին «Վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով Ջերմուկ քաղաքային համայնքին են միավորվել նաև Գնդեվազ, Հերհեր և Կարմրաշեն գյուղերը:

Ջերմուկ բնակավայրը հիշատակվում է սկսած 13-րդ դարից՝ պատմիչ Ստեփանոս Օրբելյանի «Պատմություն Նահանգին Սիսական» աշխատության մեջ: Սակայն քաղաքի տարածքում գտնվող հին կիկլոպյան ամրոցի և 8-րդ դարի եկեղեցու ավերակներն ու մնացորդները խոսում են այն մասին, որ հանքային ջրերի ակունքների մոտ գտնվող Ջերմուկ բնակավայրը գոյություն է ունեցել շատ վաղուց:

Ջերմուկի կազդուրիչ հանքային ջրերը դեռ շատ հնուց օգտագործվել են ինչպես հասարակ ժողովրդի, այնպես էլ Սյունաց Իշխանների կողմից՝ ամենատարբեր հիվանդությունների բուժման նպատակով: Այդ մասին են վկայում միջնադարում կառուցված լողավազանի մնացորդները, որոնք վերակառուցվել և վերականգնվել են 1860-ական թվականներին ցարական պրիստավ Գևորգ Խանազյանի կողմից, և այժմ էլ ժողովրդի կողմից լողավազանը կոչվում է «Պրիստավի գյուղ»: Չնայած պատմական հարուստ անցյալին, այսօրվա նոր քաղաքի հիմքը դրվել է միայն 1940 թվականին՝ առաջին առողջարանի կառուցման ավարտով: Հետագա տարիներին Ջերմուկը կառուցվել ու կառուցապատվել է:

1967 թվականից հանրապետական ենթակայության և 1970 թվականից միութենական նշանակության առողջարանների կարգը դասված քաղաք առողջարանը այսօր հանգստացողներին ու զբոսաշրջիկներին է առաջարկում շուրջ 2 000 մահճակալով առողջարանների, հյուրանոցների, պանսիոնատների, համաբուժարանների, ըմպելասրահի, լողավազանների, մարզահրապարակների, կինոթատրոնի, հասարակական սննդի օբյեկտների, բարերի ու սրճարանների ծառայությունները:

Ջերմուկում գործում են բազմաթիվ առողջարաններն ու հյուրանոցները:

Ջերմուկի հանքային ջրերը քիմիական կազմով նման են Կառլովի Վարիի հանքային ջրերին: Ջերմուկում բուժվում են ստամոքսաղիքային համակարգի, լյարդի, լեղուղիների, ենթաստամոքսային գեղձի, հենաշարժական ապարատի, ծայրամասային նյարդային համակարգի, զինեկոլոգիական հիվանդություններով և նյութափոխանակության խանգարումներով (շաքարախտ, միզաթթվային դիաթեզ) տառապողները: Ջերմուկը ոչ միայն բազմաթիվ լեգենդների բնաշխարհ է, այլ նաև քաղաքում ու մերձակայքում սփռված բազմաթիվ պատմամշակութային հուշարձաններով ու տեսարժան կառույցներով (Արփա-Սևան թունել,



Կեչուտի ջրամբար, Գնդեվանք, Վարդանի քար, Գլաձորի միջնադարյան համալսարան, Նորավանքի համալիր և այլն), արկածային տուրիզմի սիրահարներին ձգող բազմաթիվ անդնդախոր ձորերով ու բարձր ժայռերով, քարանձավներով ու որսատեղիներով հարուստ մի բացօդյա թանգարան: Հատկապես գեղեցիկ է ջերմուկյան ձնառատ, փափուկ և արևոտ ձմեռը:

Քաղաքում կան արդյունաբերական ձեռնարկություններ, որոնցից ամենախոշորը «Ջերմուկ Գրուպ» ՓԲԸ հանքային ջրերի գործարանն է, քարհանքեր, ՀԷԿ, պանրի գործարան:

2007 թվականից սկսած Ջերմուկում անցկացվում են մի շարք միջազգային մրցաշարեր և առաջնություններ, որոնց թվում նաև՝ Կարեն Ասրյանի անվան շախմատի միջազգային հուշամրցաշարը:

Ջերմուկ քաղաքի սկզբնամասում, 2007 թվականի աշնանը ավստրիական "Leitner" կազմակերպության կողմից կառուցվել է Ջերմուկի ճոպանուղին, որն ունի 1000.0մ երկարություն:

Արփայի վերին հոսանքի կիրճում են գտնվում քարայրների համալիրը (բրոնզե դարի ժամանակից), Սբ. Հովհաննես եկեղեցին, «Թուխ Մանուկ» և Սբ. Գևորգ մատուռները:

Ջերմուկի անտառային կաճանում է գտնվում ֆիդայիներին նվիրված արձանաշարը, որի հեղինակն է քանդակագործ Հովհաննես Մուրադյանը:

Ջերմուկ առողջարանային քաղաքը գտնվում է Ջերմուկի ջրաբանական արգելավայրի տարածքում: Դա բնության հատուկ պահպանվող տարածք է Արփա գետի վերին ավազանում: Ստեղծվել է հանքային ջրերի տաք աղբյուրների («Ջերմուկ» հանքային ջուր) սնման ավազանների պահպանության նպատակով:


2016 թվականին՝ համայնքների խոշորացման ծրագրի շրջանակներում, ստեղծվել է Ջերմուկ խոշորացված համայնքը, որն ընդգրկել է Ջերմուկ քաղաքը, Գնդեվազ, Կարմրաշեն և Հերհեր բնակավայրերը:

Թիվ 30/62 հորատանցքը գտնվում է Ջերմուկ քաղաքի «Արարատ» մոր և մանկան առողջարան» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 1.4 հա մակերեսով, հատուկ պահպանվող տարածքների առողջարարական նպատակներով նախատեսված հողերում (նկար 1.1), անմիջապես հարակից է առողջարանի շենքին:


Թիվ N 24/62 հորատանցքը գտնվում է «Ադամանդ-Կ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության ընդերքի օգտագործման համար տրամադրված հողատարածքում, մոտակա

շինությունը «Արարատ» առողջարանն է, հեռավորությունը հորատանցքի և շինության միջև ներկայացված է նկար 1.2-ում:


Թիվ 2/61 հորատանցքը գտնվում է պետական սեփականություն հանդիսացող անտառում, 10-002-0023-0002 ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասի սահմաններում: Հեռավորությունը մոտակա բնակելի շինությունից և Չարենց փողոցի երթևեկելի մասից ներկայացված է 1.3 նկարում:



Նկար 1.1.



Նկար 1.3.



Նկար 1.2.

### 3. ՇՐՋԱՆԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

**Ընդհանուր տեղեկություններ.** Ջերմուկի թերմալ ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի «Սարահարթի» և «Կիրճի» տեղամասերը գտնվում են ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայքի տարածաշրջանի Ջերմուկ առողջարանային քաղաքի տարածքում Արփա գետի վերին հոսանքի հովտում (տե՛ս նկար 1, 2, 3):

Հանքավայրն ասֆալտապատ ճանապարհով կապված է հանրապետության մայրաքաղաք Երևանի (173.0կմ) հետ:

Քաղաքը շրջափակված է 2500-3000 մետր բարձրության հասնող լեռնաշղթաներով, իսկ հարավ-արևմուտքում՝ Արփայի գեղատեսիլ կիրճն է: Արփայի մեջ թափվող վտակի գետաբերանի մոտ առաջացել է մի քանի տասնյակ մետր բարձրության հանքային ջրվեժ: Հայտնի է հատկապես Արփայի աջ և ձախ ավերին գտնվող՝ թվով 36 բուժիչ տաք աղբյուրներով՝ ջերմուկներով, որոնք ունեն հիդրոկարբոնատա-սուլֆատային բաղադրություն:


Ջերմուկի շրջապատն անտառապատ է: Անտառի մի մասը տնկել են 1980-1990-ական թվականներին:

Բազմազան ու հարուստ են տարածաշրջանի օգտակար հանածոները: Մեծ արժեք են ներկայացնում Ջերմուկի երկրորդային կվարցիտների ու բազալտի, Վայքի բազալտի ու գաբրոսիտիտների, Մարտիրոսի ու Արփիի ֆելզիտային տուֆի, Արենիի տրավերտինի, Ազատեկի ոսկու, Ջերմուկի, Արփիի, Սայաթ-Նովայի, Արփիի հանքային ջրերի պաշարները:

**Երկրաձևաբանություն, լանջերի թեքություն, արտածին երևույթներ և սեյսմիկ բնութագիր.** Լեռնագրական առումով Վայոց ձորի տարածաշրջանը ներառված է հարավային լեռնաշղթաների և միջլեռնային գոգավորությունների աշխարհագրական մարզի մեջ: Ծովի մակարդակից բարձրությունը այստեղ տատանվում է 850 մետրից (Արենի) մինչև 3522 մետր: Մարզի ամենաբարձր կետը Փոքր Կովկասի լեռնաշղթայի մաս կազմող Վարդենիս լեռն է (3522մ), որը գտնվում է Վայոց ձորի և Գեղարքունիքի սահմանագլխին: Համեմատաբար բարձր լեռնագագաթներ են նաև Գոգին (3120մ), Ամուլսարը (2987մ), Գնդասարը (2946մ) և Վայոցսարը (2581մ):

Վայոց ձորի մարզի աշխարհագրական դիրքավորմանը բնորոշ են լանդլաֆտի բազմազանությունն ու ռելիեֆի գոտիականությունը:

Վայոց ձորի տարածքն ընդգրկում է երեք խոշոր աշխարհագրական ենթաշրջաններ, Արփայի գոգավորություն, Վայքի ծալքաբեկորավոր լեռնաշղթա, Վարդենիսի լեռաշխարհ:



Նկար 1.

## ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Ջերմուկի թերմալ ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի  
«Սարահարթի» և «Կիրճի» տեղամասերի թիվ 30/62, 24/62 և 2/61 հորատանցքերի  
(հատված J-38-8-A-Դ, J-38-8-B-Ե թերթերից)  
Մասշտաբ 1:25000

Հորատանցքերի կոորդինատներն են՝

**I. CK-42 կոորդինատների համակարգով.**


Հոր. 30/62	X= 4412038	Y=8557488
Հոր. 24/62	X= 4411951	Y=8557076
Հոր. 2/61	X= 4411806	Y=8557900

**Հորատանցքերի բացարձակ բարձ.-ները**

Հոր. 30/62	- 2114.0մ
Հոր. 24/62	- 2105.5մ
Հոր. 2/61	- 2075.5մ

**II. WGS-84 (ARMREF 02) կոորդինատների համակարգով.**


Հոր. 30/62	X= 4412030	Y=8557388
Հոր. 24/62	X= 4411943	Y=8556976
Հոր. 2/61	X= 4411798	Y=8557800



«ԱԴԱՄԱՆԴ - Կ» ՍՊԸ  
գործադիր տնօրեն

Հ. Հակոբյան

Նկար 2.



Նկար 3.

### Իրավիճակային սխեմատիկ քարտեզ

Ռելիեֆը խիստ բարդացված է բազմաթիվ համեմատաբար նեղ և խորը Y-ա ձև կիրճերով և ձորակներով:

Հանքավայրի տարածքը գտնվում է Վարդենիսի հրաբխային լեռաշխարհի արևելյան մասի հարավային լանջի Արփա գետի վերին հոսանքում:


Արփա գետի վերին հոսանքը կարելի է բաժանել երկու խոշոր մասերի՝ թույլ մասնատված աջակողմյան և ուժեղ մասնատված ձախակողմյան սարահարթի:

Աջակողմյան մասի տարածքում առանձնացվում են ռելիեֆի երկու տիպեր՝ համեմատաբար բարձրլեռնային սարահարթ կազմված ստորին չորրորդական բազալտներով, անդեզիտաբազալտներով, անդեզիտներով և միջին լեռնային սարահարթ՝ կազմված միջին չորրորդական բազալտներով և անդեզիտաբազալտներով:


Հանքավայրի հիպսոմետրիկ բացարձակ նիշերը տատանվում են 2030.0-2120.0մ սահմաններում:

Տարածքի երկրաձևաբանական և լանջերի թեքության սխեմատիկ քարտեզները ներկայացված են նկարներ 4-5-ում:


Ջերմուկի թերմալ ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի «Սարահարթի» և «Կիրճի» տեղամասերի թիվ 30/62, 24/62 և 2/61 հորատանցքերի գտնվելու վայրում սողանքային երևույթներ չկան:



Նկար 4. Ջեղնուկի հանքավայրի տարածաշրջանի երկրաձևաբանական սխեմատիկ քարտեզ



**Նկար 5.**  
Չերմուկի հանքավայրի շրջանի լանջերի թեքության սխեմատիկ քարտեզ



**Նկար 6.**  
Չերմուկի հանքավայրի շրջանի սողանքային մարմինների սխեմատիկ քարտեզ



Համաձայն Հայաստանում սողանքների տեխնիկական տեղեկագրի (Միջազգային համագործակցության ճապոնական գործակալություն, ՀՀ քաղաքաշինության նախարարություն, 2005) սողանքային մարմիններ հայտնի են Ջերմուկ քաղաքից մոտ 2.5-4կմ հեռավորության վրա (նկար 6):


Սողանքային մարմինների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը ներկայացված է ստորև, աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1.

Սողանքային մարմինը	Կոորդինատները						Բացարձ. բարձ., մ	Երկար., մ	Լայն., մ	Մակերեսը, հա
	հս.լայն.		արլ. երկ.							
008-0490	39	51	16	45	43	14	2307	800	350	25
008-0500	39	50	57	45	42	27	2167	550	1200	60

Սողանքային մարմինները դասվել են վտանգավորության III մակարդակին, ըստ ռիսկայնության՝ ցածր ռիսկային են:

Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի փետրվարի 3-ի «Սեյսմակայուն շինարարություն. նախագծման նորմեր» N 24-Ն հրամանի՝ տեղամասերի տարածքը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում, որին բնորոշ է 300սմ/վրկ<sup>2</sup> կամ 0.3g գրունտի հորիզոնական արագացման մեծություն (նկար 7):



Նկար 7.

ՀՀ տարածքի հավանական սեյսմիկ վտանգի գոտիավորման քարտեզ

**Ջրային ռեսուրսներ.** Հայաստանի Հանրապետության գետերը պատկանում են Կուրի և Արաքսի ավազաններին: Արաքսի ավազանն ընդգրկում է հանրապետության տարածքի 76%-ը, իսկ Կուրի ավազանը՝ 24%-ը: Ջրբաժան գիծն անցնում է Ջավախքի, Փամբակի, Արեգունու և Սևանի լեռների կատարներով:

Ջերմուկի հանքավայրի տարածքը պատկանում է Արաքսի ավազանին: Տարածաշրջանի գլխավոր ջրային երակն է Արփա գետն՝ Արաքսի ձախ վտակը, որը սկիզբ է առնում Թեքսարի լեռների հորդառատ աղբյուրներից 3200.0 մ բարձրությունից:

Գետը Ջերմուկ քաղաքից թեքում է հյուսիս-արևելք և հոսում է Շարուրի դաշտով: Վերին հոսանքում գետը դանդաղահոս է, բայց դեռ չհասած Ջերմուկին՝ դառնում է արագահոս և, ձեղքելով Վարդենիսի լեռնալանջերը, գահավիժում է անտառապատ խոր կիրճը: Ջերմուկից ներքև Արփան հոսում է գալարումներով և իր ընթացքը մերթ արագ, մերթ դանդաղ շարունակում է մինչև Արենի գյուղը:


Գետի երկարությունը 128.0 կմ է (Հայաստանում 90.0 կմ), ջրհավաք մակերեսը՝ մոտ 2600 կմ<sup>2</sup>: Մնումը հիմնականում ձնաանձրևային է (57%), հորդանում է ապրիլ-հունիսին, առավել չափով՝ մայիսին: Տարեկան միջին ծախսը՝ 21,6 մ<sup>3</sup>/վրկ (Արենի), առավելագույնը՝ 146 մ<sup>3</sup>/վրկ, նվազագույնը՝ 6,2 մ<sup>3</sup>/վրկ: Տարեկան հոսքը՝ 682.0 մլն.մ<sup>3</sup>: Վտակներից են՝ ձախ կողմից Դարբ, Գնիշիկ, աջից՝ Հերիեր, Եգեգիս, Ելփին:

Արփայի վրա կառուցված են Ջերմուկի, Ագատեկի, Եղեգնաձորի և Արենիի ՀԷԿ-երը: 1981թ.-ին շահագործման է հանձնվել Արփա-Սևան ջրատարը, որի գլխամասում սաեղծվել է Կեչուտի ջրամբար թունելը:


ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերեկվութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվում է Արփա գետի որակի մոնիթորինգ: Ամենամոտ թիվ 83 դիտակետը գտնվում է Ջերմուկ քաղաքից 0.5կմ վերև (նկար 8), ջուրը այդ դիտակետում 2-րդ դասի է՝ «լավ» որակի:

**Կլիմա.** Լինելով տիպիկ լեռնային երկիր՝ ՀՀ-ում կլիմայի փոփոխությունը տեղի է ունենու ըստ ծովի մակերևույթից ունեցած բարձրության: ՀՀ-ում առանձնացվում են կլիմայի վերընթաց 8 գոտիներ:

Տարածաշրջանի կլիման բնութագրվում է բազմազանությամբ և ուղղաձիգ գոտիականությամբ: Հանքավայրի տեղամասը ունի բարեխառն լեռնային գոտու կլիմային գծեր, որը ձևավորվում է մինչև 2400.0 մ բարձրության լեռնալանջերին և սարավանդներում: Ամառը զով է, ձմեռը՝ երկարատև և ձյունառատ (նկար 9):



Նկար 8. Արփա գետի ավազանի մունիթորինգի ցանց



Նկար 9.

Գլխայական գոտիների տարածման սխեմատիկ քարտեզ

Արևափայլի տևողությանը կազմում է տարեկան 2300 ժամ: Օդի օրական միջին ջերմաստիճանը Ջերմուկում կազմում է՝ գարնանը՝ +0.4 °C, ամռանը՝ +15.3 °C, աշնանը՝ + 4.9 °C, ձմռանը՝ -9 °C: Հունվարի միջին ջերմաստիճանը -9 °C է, նվազագույնը՝ -35 °C, հուլիսինը՝ 18 °C, առավելագույնը՝ 32 °C, տարեկան տեղումները՝ մոտ 800 մմ, հարաբերական խոնավությունը՝ 45-48%:

Քաղաքի տարածքի կլիմայական բնութագրերը ներկայացվում են ըստ Ջերմուկ օդերևութաբանական կայանի (2064մ) բազմամյա դիտարկումների արդյունքների:

Աղյուսակ 2.

Օդի ամսեկան և տարեկան ջերմաստիճանները

Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
-7.4	-6.4	-2.1	3.8	8.8	12.9	16.2	16.5	12.9	6.7	0.4	-4.8	4.8	-30	33

Աղյուսակ 3.

Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %

I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
73	72	71	70	69	67	66	63	61	68	71	74

Օդի միջին տարեկան հարաբերական խոնավությունը կազմում է 69%, ամենացուրտ ամսվա ժամը 15<sup>00</sup>-ին՝ 64%, ամենաշոգ ամսվա ժամը 15<sup>00</sup>-ին՝ 42%:

Աղյուսակ 4.

Տեղամների քանակը միջին ամսական/օրական առավելագույն, մմ												
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	տար.
64	74	83	103	97	71	42	26	24	65	63	67	779
41	83	44	63	42	49	49	39	32	63	41	51	83

Չնածածկույթի առավելագույն տասնօրյակային բարձրությունը 212սմ, տարվա մեջ ձնածածկույթով օրերի թիվը 146, ձյան մեջ ջրի առավելագույն քանակը 399մմ:

Քամիներ

Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, հՊա	Ամիսներ	Կրկնելիությունը, % Միջին արագությունը, մ/վ								Միջին ամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով օրերի քանակը, օր
		Ուղղությունները										
		Հս	Հս-Արլ	Արլ	Հվ-Արլ	Հվ	Հվ-Արմ	Արմ	Հս-Արմ			
792.6	Հունվար	4	6	19	34	26	6	2	3	0.8	1.6	17
		2.0	2.3	2.2	2.2	1.7	2.1	2.0	2.1			
	Ապրիլ	5	5	17	30	24	9	4	6	1.5		
		2.0	2.2	2.5	2.8	2.5	2.6	2.5	2.2			
	Հուլիս	3	6	14	55	24	5	2	2	2.8		
		2.3	2.7	3.1	3.9	3.5	2.7	2.6	2.4			
	Հոկտեմբեր	2	4	13	27	32	15	4	3	1.2		
		1.6	2.3	2.4	2.6	2.5	2.8	2.9	1.8			

Արևափայլի տևողությունը ըստ ամիսների, ժամ

I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	զումար
125	126	141	153	198	267	311	300	263	195	135	118	2332

Անարև օրերի քանակը

I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	տարեկան
7	6	7	4	2.0	0.4	0.04	0.2	0.2	2	6	8	43

**Մթնոլորտային օդ.**

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից Ջերմուկ քաղաքում մթնոլորտային օդի մոնիթորինգ չի իրականացվում:

2021 թվականի հոկտեմբերին կատարվել է տարածքի մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկում, ինչը հիմք է հանդիսանալու աշխատանքների ընթացքում մշտադիտարկումների իրականացման համար: Որոշվել է փոշու, ազոտի երկօքսիդի և ածխածնի օքսիդի կոնցենտրացիաները: Դրանք կազմում են համապատասխանաբար՝ փոշի՝ 0.11մգ/մ<sup>3</sup>, ազոտի երկօքսիդ՝ 0.0061մգ/մ<sup>3</sup>, ածխածնի օքսիդ՝ 0.29 մգ/մ<sup>3</sup>:

Աղտոտվածության գնահատման համար հիմք կընդունվի «ՀՀ բակավայրերի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները» ուղեցույց-ձեռնարկը, համաձայն ինչի Ջերմուկ քաղաքում օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են. փոշի՝ 0.2 մգ/մ<sup>3</sup>, ծծմբի երկօքսիդ՝ 0.02 մգ/մ<sup>3</sup>, ազոտի երկօքսիդ՝ 0.008 մգ/մ<sup>3</sup>, ածխածնի օքսիդ՝ 0.4 մգ/մ<sup>3</sup>:

**Հողային ծածկույթ.** Վայոց Ձորի մարզի հողաբուսական ծածկույթը բավականին խայտաբղետ է: Ջերմուկ քաղաքի տարածաշրջանում զարգացած են լեռնամարգագետնային, մարգագետնատափաստանային, դարչնագույն անտառային հողերը և սևահողերը (հողերի բնական տիպերի բաշխվածությունը բերված է նկար 10-ում):


Լեռնամարգագետնային հողերը ունեն լավ արտահայտված նուրբ հատիկավոր ստրուկտուրա, աղքատ են կարբոնատներից: Պարունակում են մեծ քանակության հումուս (18-25, երբեմն 25-30%): Հողաշերտի հզորությունը փոքր է, կախված ռելիեֆի պայմաններից հզորությունը տատանվում է 15-20-ից 40-50սմ-ի սահմաններում: Մեխանիկական կազմը հիմնականում կավավազային է, հողային լուծույթի ռեակցիան թթվային է, рН տատանվում է 4.5-6.4-ի սահմաններում:

Մարգագետնատափաստանային հողերը պարունակում են մեծ քանակությամբ հումուս (9-10, մինչև 18%), ունեն լավ արտահայտված հատիկակնձկային ստրուկտուրա, կավավազային մեխանիկական կազմ, հզոր են կամ միջակ հզոր: Այս հողերի քիմիական ու ֆիզիկաքիմիական հատկությունները հետևյալն են.

Աղյուսակ 8.

Հողատիպը և ենթատիպը	Խորությունը, սմ	Հումուսը, %	Կլանված հիմքերի գումարը, մ/էկվ 100գ հողում	рН-ը ջրային քաշվածքում	Հիդրոլիզային թթվությունը, մ/էկվ 100գ հողում
1	2	3	4	5	6
Մարգագետնատափաստանային հողեր	0-5	18.1	49.3	6.2	4.6
	5-14	10.8	49.4	6.7	8.0
	14-27	7.8	44.7	6.7	7.5
	27-40	5.8	28.6	6.8	4.6
	40-61	2.0	22.7	6.8	2.7
	61-82	0.8	21.5	6.9	1.6
	82-120	0.4	22.0	7.0	1.4

## ՀՈՂԵՐԻ ԲՆԱԿԱՆ ՏԻՊԵՐԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՔԱՐՏԵԶ



- ① Լեռնամարգագետնային թույլ ճնային խորքային - հագեցած փոքր հզորության կավավազային թույլ և միջին հողմահարված
- ② Մարգագետնատափաստանային սևահողանման մնացորդային - հագեցած մեծամասամբ միջին հզորության կավավազային միջին հողմահարված
- ③ Մարգագետնատափաստանային սևահողանման մնացորդային - հագեցած փոքր հզորության կավավազային միջին հողմահարված
- ④ Մարգագետնատափաստանային տիպիկ մնացորդային մեծամասամբ միջին հզորության կավավազային
- ⑤ Մարգագետնատափաստանային տիպիկ քարքարոտ փոքր հզորության կավավազային միջին հողմահարված
- ⑥ Դարչնագույն անտառային լվացված կավայնացված հզոր
- ⑦ Դարչնագույն անտառային լվացված տափաստանացված միջին հզորության կավային թույլ հողմահարված
- ⑧ Դարչնագույն անտառային լվացված տափաստանացված միջին հզորության կավավազային թույլ հողմահարված
- ⑨ Դարչնագույն անտառային լվացված մեծամասամբ միջին հզորության կավային մշակովի
- ⑩ Դարչնագույն անտառային կարբոնատային քարքարոտ փոքր հզորության կավավազային
- ⑪ Դարչնագույն անտառային կարբոնատային տափաստանացված փոքր հզորության կավավազային միջին և ուժեղ հողմահարված
- ⑫ Սևահողեր լվացված թույլ հումուսային մեծամասամբ միջին հզորության կավավազային թույլ հողմահարված
- ⑬ Սևահողեր լվացված թույլ հումուսային կավավազային թույլ և միջին հողմահարված
- ⑭ Սևահողեր լվացված թույլ հումուսային միջին հզորության կավային մշակովի
- ⑮ Սևահողեր լվացված թույլ հումուսային միջին հզորության կավավազային մշակովի

Նկար 10.

Այս հողերը նկարագրվող տարածքում հանդես են գալիս լվացված ենթատիպով: Լվացված դարչնագույն անտառային հողերը զբաղեցնում են ստվերահայց լանջերը և ձևավորվել են համեմատաբար ավելի խոնավ պայմաններում, քան տիպիկ ենթատիպը: Սրանք բնութագրվում են դարչնագույն և մուգ-դարչնագույն գույնով, հումուսի բավական բարձր պարունակությամբ (10-14%), որը խորության ուղղությամբ արագ նվազում է: Հումինային նյութերում հումինաթթուների և ֆուլվոթուների քանակը գրեթե հավասար է: Ունեն գլխավորապես կավավազային մեխանիկական կազմ:

Կլանման տարողությունը բարձր է, կլանված կատիոններում գերակշռողը Ca-ն է: Ռեակցիան չեզոք է կամ թույլ հիմնային:

Բնութագրվում են բարելավ ֆիզիկական և ջրաֆիզիկական հատկություններով, լավ արտահայտված ստրուկտուրայով:

Դարչնագույն անտառային հողերի քիմիական ու ֆիզիկաքիմիական  
հատկությունները

Հողատիպը և ենթատիպը	Խորությունը, սմ	Հումուսը, %	CO <sub>2</sub> , %	Կլանված կատիոնների գումարը, մ/էկվ 100գ հողում	pH-ը ջրային քաշվածքում
1	2	3	4	5	6
Լվացված դարչնագույն անտառային	0-10	14.1	չկա	40.3	6.6
	10-26	3.7	չկա	39.1	6.7
	26-49	2.2	չկա	33.4	6.5
	49-64	1.4	չկա	38.6	6.8
	64-85	1.14	չկա	37.6	7.7
	85-107	0.8	չկա	38.9	7.3
Կարբոնատային դարչնագույն անտառային	2-16	10.8	1.9	22.8	7.8
	16-31	4.5	5.2	15.6	8.0
	31-43	2.5	7.5	17.0	7.5
	43-120	1.2	8.9	19.8	7.9

«Սարահարթի» և «Կիրճի» տեղամասերի թիվ 30/62, 24/62 և 2/61 հորատանցքերի գտնվելու տարածքը հիմնականում կառուցապատված է, այստեղ են տեղադրված հանքային ջրերի արդյունահանման նպատակով ստեղծված ենթակառուցվածքները, շինությունները, ռեկրեացիոն և բուժական նպատակներով ծառայող լողավազանները, բաց հողային տարածքներ այս հատվածներում գրեթե չկան:

Այդուամենայնիվ, հայցվող տարածքներին հարակից կանաչապատ հատվածից կատարվել է հողի նմուշառում՝ ծանր մետաղների և օրգանական աղտոտիչների պարունակությունները որոշելու համար: Հողերում արձանագրվել է 0.29-0.31մգ/կգ պղնձի, 1.09-1.38մգ/կգ ցինկի, 407-511մգ/կգ ֆոսֆորի, 11403-11507մգ/կգ կալիումի և 311-319մգ/կգ մանգանի պարունակություններ: Ըստ ՀՀ առողջապահության նախարարի 25.01.2010թ.-ի թիվ 01-Ն հրամանի պղնձի պարունակությունները ավելի քան 10 անգամ, ցինկինը՝ մոտ 17 անգամ, մանգանը մոտ 2 անգամ փոքր են սահմանված ՍԹԿ-ից: Ֆոսֆորի և կալիումի համար ՍԹԿ-ներ սահմանված չեն:

Պարարտանյութերի, դրանց բաղկացուցիչ տարրերի, օրգանական այլ աղտոտիչների պարունակություններ չեն արձանագրվել:

Շրջանում զարգացած սևահողերում առանձին ծագումնաբանական հորիզոնների քիմիական բաղադրությունը, մասնավորապես սիլիցիումի, ալյումինիումի, երկաթի, կալիումի




պարունակության տեսակետից առանձնապես խիստ չի տարբերվում, նկատվում է դրանց հավասարաչափ կուտակում հողի պրոֆիլի սահմաններում:

Հողային լուծույթի ռեակցիան գլխավորապես չեզոք է (pH-ը տատանվում է 7-ի սահմաններում): Կլանող համալիրը հագեցված է հիմնականում Ca-ով և Mg-ով: Բնորոշ է կնձկային ստրուկտուրա: Հարուստ են ընդհանուր ազոտով (0.15-0.35%), ֆոսֆորական թթվով (0.15-0.26%) և կալիումով (1-2%):

**Բուսական աշխարհը.** Ջերմուկի հանքավայրի տարածքը պատկանում է Հայաստանի Դարալագյազի ֆլորիստիկ շրջանին: Տարածքի բուսականությունը հիմնականում ներկայացված է է մարգագետնային-տափաստանային տիպին (նկար 11), որտեղ տարածված են *Festuca versicolor* Tausch, *F. ovina* L., *F. valesiaca* Gaudin, *Hordeum violaceum* Boiss et Huet, *Carex humilis* Leys, *Trifolium ambiguum* և ուրիշ ֆրակցիաներ: Դաշտային հատվածներում հանդիպում են մարգագետնատափաստանային խմբակցություններ: Ժայռոտ հատվածներում աճում են ծորենու, մասրենու, մոշի ալոճենու թփուփներ: Դեղաբույսերից տարածված են. Խնկաձաղիկ սովորական (*Origanum vulgare* L.), օշինդր դառը (*Artemisia absinthium* L.), եղեսպակ (*Salvia sciarea* L.), թանթրվենի (*Sambucus nigra* L.), շրեշ (*Eremurus spectabilis* Bieb.) և ուրիշ տեսակներ:

Շրջանի բնական համալիրներից են անտառները և թփուտային անտառատափաստանները: Անտառներում գերաշռում է կաղնին, առանձին հատվածներում զարգացած են տանձենու ու գիհու նոսրանտառները:



Նկար 11. Բուսականության տիպերի սխեմատիկ քարտեզ

Հայցվող տարածքում կրիտիկական կազմակերպում գտնվող, խոցելի կամ վտանգված բուսատեսակների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով կատարվել է ՀՀ բույսերի կարմիր գրքի տվյալների վերլուծություն: Ջերմուկի տարածաշրջանում հայտնի են ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված հետևյալ տեսակները.

Աղյուսակ 10.

Բուսատեսակը	Կատեգորիան	Առանձնահատկությունները	Պահպանության միջոցառումները
1	2	3	4
Նեկտարոսկողում եռատունաչափ	Վտանգված	Աճում է միջին լեռնային գոտուց մինչև ենթալպյան գոտի, ծ. մ. 1700-2500 մ բարձրությունների վրա. անտառային բացատներում, մարգագետիններում, թփերի մացառուտներում, ժայռերի ճեղքերին:	Պոպուլյացիայի մի մասը գտնվում է նոր ստեղծված «Արևիկ» ազգային պարկի սահմաններում:
Սմիրնիոպսիս հայկական	Վտանգված	Աճում է վերին լեռնային և ենթալպյան գոտիներում, ծ. մ. 2000-2500 մ բարձրությունների վրա բաց քարքարոտ և խճաքարոտ լանջերին, տափաստանային թփերի մացառուտներում, շատ հաճախ պատմական հուշարձանների մոտ:	Չեն իրականացվում
Ստենոտենիա Դարալագյազի	Վտանգված	Աճում է միջին և վերին լեռնային գոտիներում, ծ. մ. 1600-2000 մ բարձրությունների վրա թփերի մացառուտներում, կավային լանջերին, ենթալպյան բարձրախոտում:	Չեն իրականացվում
Տերեփուկ ֆեոպայուսանման	Վտանգված	Աճում է միջին և վերին լեռնային գոտիներում, ծ. մ. 1300-2300 մ բարձրությունների վրա. չոր քարքարոտ լանջերին, ժայռերի միջև, չինգիլների վրա, կաղնու և գիհու նոսրանտառներում:	Չեն իրականացվում

1	2	3	4
Գրոսհեյմիա Կարլ-Հենրիի	Կրիտիկական վիճակում գտնվող	Աճում է ենթալայան գոտու ծ. մ. մոտ 2000-2200 մ բարձրությունների վրա բարձրախոտում, անտառի եզրերին:	Չեն իրականացվում
Նվարդակ քնարածն	Վտանգված	Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում ծ. մ. 800-1800 մ բարձրությունների վրա. չոր քարքարոտ, խճուտ, ժայռոտ լանջերին:	Չեն իրականացվում
Ծվծվուկ Արաքսի	Վտանգված	Աճում է վերին լեռնային գոտում, ծ. մ. 1900-2400 մ բարձրությունների վրա. ժայռոտ տեղերում:	Չեն իրականացվում
Շնդեղ Նինայի	Վտանգված	Աճում է վերին լեռնային գոտում, ծ. մ. 2000-2100 մ բարձրությունների վրա. գերխոնավացած և ճահճացած տեղերում:	Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Արևիկ» ազգային պարկի սահմաններում
Զիվան Նախիջևանի	Կրիտիկական վիճակում գտնվող	Աճում է ենթալայան գոտում ծ. մ. մոտ 2200 մ բարձրության վրա. ենթալայան բարձրախոտում:	Չեն իրականացվում
Գազ սողանլուի	Վտանգված	Աճում է վերին և ենթալայան լեռնային գոտիներում, ծ. մ. 1800-2700 մ բարձրությունների վրա. խճաքարոտ լանջերին, մարգագետիններում:	Չեն իրականացվում
Հաղարջենի հայկական	Վտանգված	Աճում է միջին և վերին լեռնային գոտու ծ. մ. 1600—2200 մ բարձրությունների վրա. ժայռոտ և քարքարոտ տեղերում, անտառի եզրերին:	Չեն իրականացվում
Աղիանտում Վեներայի վարս	Խոցելի	Աճում է ստորին, միջին և վերին լեռնային գոտիներում, ծ. մ. 700—2200 մ բարձրությունների վրա, խոնավ ժայռերի ճեղքերում, տրավերտիտների վրա, ջրվեժների և ջրավազանների մոտ:	Երկու աճելավայրեր պահպանվում են «Խոսրովի անտառ» պետական արգելոցի տարածքում

1	2	3	4
Տանձենի դարելեզիսի	Վտանգված	Աճում է վերին լեռնային գոտում, ծ. մ. 1700-2200 մ բարձրությունների վրա. Լայնատերև անտառներում:	Չեն իրականացվում
Տանձենի Գերգերի	Վտանգված	Աճում է միջին և վերին լեռնային գոտիներում, ծ. մ. 1600-2200 մ բարձրությունների վրա. Լայնատերև անտառներում:	Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Հեր-Հերի նոսրուտային» արգելավայրի տարածքում:

«Սարահարթի» և «Կիրճի» տեղամասերի թիվ 30/62, 24/62 և 2/61 հորատանցքերի գտնվելու տարածքը ներկայացված է ուրբանիստական լանդշաֆտով՝ ջրի արդյունահանման ենթակառուցվածքներ, ռեկրեացիայի և բուժման նպատակով կառուցված շինություններ, լողավազաններ: Հորատանցքերի և հարակից տարածքում կատարվել են դիտարկումներ երթուղային մեթոդով, որոնց արդյունքում վերը թվարկված՝ ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ չեն հայտնաբերվել: Միաժամանակ, բուն հորատանցքերը իրենց գլխամասային սարքավորումներով գտնվում են սանիտարական առաջին (խիստ պահպանման) գոտում, ցակնապատված են, բետոնապատված և պահպանված արտաքին գործոնների ազդեցությունից:

**Կենդանական աշխարհը.** Կենդանական աշխարհի տեղաբաշխումն իր հերթին համապատասխանում է բուսական գոտիների դասավորությանը: Վայոց Ձորի մարզի կենդանական աշխարհին բնորոշ են հիմնականում լեռնատափաստանային և լեռնաանտառային կենդանատեսակները:

Ջերմուկ քաղաքի շրջանում հանդիպում են ողնաշարավոր կենդանիների ավելի քան 220 տեսակ: Քաղաքը շրջապատող անտառներում հայտնի են գայլ, աղվես, կզաքիս, անտառային կատու, Արփա գետում և դրա վտակներում՝ կարմրախայտ, կողակ: Շատ են սողունները՝ օձեր (գյուրգա, շահմար) և մողեսներ:

Անտառն առատ է թռչուններով՝ խածկոտիկներ, սերինոսներ, ծվժվան երաշտահավեր, փետրավոր գիշատիչներից են բուն, բվեճը, մորաճուռակը: Անողնաշարավորներից են՝ ծղրիդ, ճռիկ, մորեխ, մեղու, փայտոջիլ, մրջյուն, անձրևորդ, մոծակ, կապտաթիթեռ, ճանձեր:

Հայցվող տարածքում անհետացած, կրիտիկական վիճակում գտնվող, խոցելի կամ վտանգված կենդանական տեսակների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով կատարվել է ՀՀ կենդանիների կարմիր գրքի տվյալների վերլուծություն: Ջերմուկի տարածաշրջանում հայտնի են ՀՀ կենդանիների կարմիր գրքում, անողնաշարավորների բաժնում գրանցված հետևյալ տեսակները.

Աղյուսակ 11.

Կենդանական տեսակը	Կատեգորիան	Ապրելավայրերը	Պահպանության միջոցառումները
1	2	3	4
Խնձորյանի գնայուկ	Սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ	Ջերմուկ քաղաքից 3300մ դեպի հյուսիս-արևելք «Սարեր Սարցալի» տեղանք: Հանդիպում է ալպյան մարգագետիններում՝ 3100-3300 մ ծ.մ.բ:	Չեն իրականացվում
Մենմոզինա կամ սև ապոլոն	Խոցելի	Լեռնատափաստանային գոտու մարգագետիններ, անտառային բացատներ:	Պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցում և «Դիլիջան» ու «Արևիկ» ազգային պարկերում, ինչպես նաև մի շարք անտառային արգելավայրերում
Ապոլոն	Խոցելի	Նոսրանտառներ, վերին անտառեզր, սուբալպյան գոտի՝ քարքարոտ սարալանջեր	Պահպանվում է «Շիկահող» պետական արգելոցում և «Դիլիջան», «Սևան» ու «Արևիկ» ազգային պարկերում, ինչպես նաև մի շարք անտառային արգելավայրերում
Կաչուկի իլիկաթիթեռ	Խոցելի	Անապատներ, կիսաանապատներ, գիհու նոսրանտառներ,	Պահպանվում է «Խոսրովի անտառ»

		ճանապարհների երկայնքով անտառաշերտեր, քաղաքների և ավանների պուրակային գոտիներ, <i>Eleagnus angustigolia</i> տեսակի մացառուտներով, ակտիվ մարդկային գործունեությունից զուրկ ռուդեռալ լանդշաֆտների հատվածներ	պետական արգելոցում
--	--	--	--------------------

Ինչպես արդեն նշվել է, «Սարահարթի» և «Կիրճի» տեղամասերի թիվ 30/62, 24/62 և 2/61 հորատանցքերի գտնվելու տարածքը ներկայացված է ուրբանիստական լանդշաֆտով՝ ջրի արդյունահանման ենթակառուցվածքներ, ռեկրեացիայի և բուժման նպատակով կառուցված շինություններ, ճանապարհներ: Բուն հորատանցքերը իրենց գլխամասային սարքավորումներով գտնվում են սանիտարական առաջին (խիստ պահպանման) գոտում, ցակնապատված են, բետոնապատված և պահպանված արտաքին գործոնների (օրինակ՝ կենդանիների ներխուժում) ազդեցությունից: Հորատանցքերի և հարակից տարածքներում կատարվել է վիզուալ դիտարկում, կենդանիների հետքերի, սննդի մնացորդների, էքսկրեմենտների ուսումնասիրություն: Խոշոր կաթնասուններ, դրանց հետքեր, բներ հորատանցքերի տարածքում չեն դիտարկվել: Թիվ 2/61 հորատանցքի տարածքին հատակից ծառաթփուտներում նշվել է սովորական կաչաղակ և ծիծեռնակ: Հորատանցքերի տարածքում ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակներ չեն դիտարկվել:


**Բնության հատուկ պահպանվող տարածքներ:** Ջերմուկ քաղաքի շրջակայքում են գտնվում Ջերմուկի ջրաբանական, Ջերմուկի անտառային և հերիերի նոսրանտառային արգելավայրերը: Բնության ատուկ պահպանվող տարածքների և հորատանցքերի տեղադրվածության տարածքի միջև հեռավորությունները ներկայացված են նկար 12-ում:

«Ջերմուկի ջրաբանական» պետական արգելավայրը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2009թ.-ի սեպտեմբերի 17-ի թիվ 1063-Ն որոշմամբ՝ Արփա գետի վերին հոսանքի ջրհավաք ավազանի տարածքի բնական էկոհամակարգերի, այդ թվում՝ կենսաբազմազանության, բնության եզակի հուշարձանների և հանքային ջրերի տաք աղբյուրների սնման ավազանների պահպանության նպատակով: Այն գտնվում է Վայոց Ձորի մարզի Արփա գետի վերին հոսանքի ջրհավաք ավազանի տարածքի սահմաններում՝ ակունքից մինչև եզրափակման կետը՝ «Ջերմուկ» առողջարանի հիդրոլոգիական կետը՝ ծ.մ. 1100-2800մ բարձրության վրա:

«Ջերմուկի անտառայն» արգելավայրը հիմնադրվել է ՀՍՍՀ Մինիստրների սովետի 1958 թվականի սեպտեմբերի 13-ի որոշմամբ 3865հա տարածքում՝ ՀՀ Վայոց Ձորի մարզում, Արփա գետի ավազանում, ծովի մակարդակից 1100-2800 մ բարձրության վրա: Պահպանության օբյեկտներն են խոշորաեջ կաղնու լեռնային անտառները և դրանց բնորոշ կենդանական աշխարհը:

«Հերիերի նոսրանտառային» պետական արգելավայրը հիմնվել է 1958թ.-ին Արփա գետի աջափնյա վտակ Հերիեր գետի ավազանում՝ ծովի մակարդակից 1400-2000մ բարձրության վրա գիհու ռելիեֆային նոսրանտառների պահպանության նպատակով:

«Սարահարթի» և «Կիրճի» տեղամասերի թիվ 30/62, 24/62 և 2/61 հորատանցքերը գտնվում են բնության հատուկ պահպանվող տարածքների սահմաններից նվազագույնը 1.1կմ հեռավորության վրա (նկար 12):



**Նկար 12.**  
Բնության հատուկ պահպանվող տարածքների սխեմատիկ քարտեզ

Բնության հատուկ պահպանվող տարածքներ են համարվում նաև բնության հուշարձանները, որոնց ցանկը հաստատվել է ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N 967-Ն որոշմամբ : ՀՀ Վայոց ձորի մարզում հաշվառված են բնության հետևյալ հուշարձանները.

Աղյուսակ 12.


Անվանումը	Տեղադիրքը
1	2
«Բլրաբերդ» հրաբխային գմբեթ	Եղեգնաձոր-Վայք ճանապարհի աջ կողմում
«Սատանայի աշտարակ» սյունաձև բազալտներ	Վայք-Ջերմուկ հին ճանապարհին, Արփա գետի կիրճում
«Բախտի կամար» բնական քարե թունել	Ջերմուկ քաղաք, Արփա գետի կիրճում
«Անանուն» որմնաքանդակներ	Երևան-Գորիս խճուղու ձախ կողմում, Ջերմուկ տանող ճանապարհից 44 մ դեպի Գորիս
«Անանուն» լավային ծալքեր	Ջերմուկ քաղաքից 5 կմ հվ-արլ
«Վարդան Մամիկոնյան» քարե քանդակ	Կեչուտի ջրամբարից 2 կմ հվ, Արփա գետի կիրճում, Վայք-Ջերմուկ հին ճանապարհին
«Ցիցքար» ժայռագագաթ	Վայք քաղաքից 0.5 կմ հս-արմ
«Տորք Անգեղ» քարե քանդակ	Ագարակաձոր գյուղից 1.5 կմ հվ-արլ, Անապատ վայրում
«Սֆինքս» քարե քանդակ	Ագարակաձոր գյուղ, Գրավ գետի կիրճում
«Սպիտակ քար» ժայռ-մնացուկ	Աղավնաձոր գյուղից 3 կմ հս-արմ, Աղավնաձոր-Ելփին ճանապարհի աջ կողմում
«Անանուն» տեկտոնական խախտում	Արենի գյուղի արլ մասում, Արփա գետի ձախ ափին
«Պահակային աշտարակ», էրոզիոն ժայռ-մնացուկ	Վայք-Ջերմուկ հին ճանապարհին, Արփա գետի կիրճում, Գնդեվազ գյուղի դիմաց
«Անանուն» դայկա	Գնդեվազ գյուղից 1-1.5 կմ հս-արլ, Արփա գետի կիրճում, Վայք-Ջերմուկ հին ճանապարհին
«Անանուն» դայկաներ	Գնդեվազ գյուղից 4 կմ հս-արլ, Արփա գետի կիրճում, Վայք-Ջերմուկ հին ճանապարհին
«Անանուն» սյունաձև անջատմամբ բազալտներ	Գոմք գյուղի հս-արլ մասում, ձորակի աջ կողմում
«Անանուն» դայկա	Ելփին գյուղի հվ եզրին
«Անանուն» խզվածքային կառուցվածք	Ելփին գյուղի արմ ծայրամասում
«Անանուն» քարե քանդակներ	Խնձորուտ գյուղից 2.0 կմ հս, Չառիթափ-Խնձորուտ ավտոճանապարհի երկու կողմում
«Վայոցսար» (Դալիկ) հրաբուխ	Կարմրաշեն գյուղից 3.0 կմ հվ-արմ
«Անանուն» լավային հոսք	Շատին գյուղից 0.5 կմ արլ
«Անանուն» դայկայանման մարմին «Գետիկվանքի» բրածո ֆլորա	Վերնաշեն գյուղից հս
	Գետիկվանք գյուղից 3 կմ հս-արլ, 2240 մ բարձրության վրա
«Ագատեկի» բրածո ֆլորա	Ագատեկ գյուղի մոտ
«Ջերմուկի» աղբյուրներ	Ջերմուկ առողջարանի տարածքում, ծ.մ-ից 2140 մ բարձրության վրա



«Յոթաղբյուր» աղբյուր	Ջերմուկ քաղաքից 10 կմ հս-արլ դեպի Ալ լիճ տանող ճանապարհին, Ջերմուկի հրաբխային պլատոյի վրա, ծ.մ-ից 2610 մ բարձրության վրա
«Գրավի» աղբյուր	Աղավնաձոր գյուղից 5 կմ հվ, Գրավ գետի հովտում, ծ.մ-ից 1630 մ բարձրության վրա
«Պարույր Սևակ» աղբյուր	Աղավնաձոր գետի վերին հոսանքում, ծ.մ-ից 1985 մ բարձրության վրա
«Արտաղբյուր» աղբյուր	Եղեգիս գյուղից 2.7 կմ հս-արլ, Եղեգիս գետի աջ ափին, ծ.մ-ից 1840 մ բարձրության վրա
«Ջրովանք» աղբյուր	Արփի գյուղից 3 կմ հվ-արլ, Արփա գետի ձախ վտակ Ջրովանք գետակի ակունքում, ծ.մ-ից 1345 մ բարձրության վրա
«Առնետի» աղբյուր	Խաչիկ գյուղից 3 կմ հս-արլ, ծ.մ-ից 1780 մ բարձրության վրա
«Բազմաղբյուր» աղբյուրներ	Հերիեր գյուղի մոտ, ծ.մ-ից 1508 մ բարձրության վրա
«Մոզ» աղբյուր	Մալիշկա գյուղից 2.5 կմ արլ, Արփա գետի կիրճի աջ ափին, ծ.մ-ից 1170 մ բարձրության վրա
1	2
«Հովվալիճ»	Ջերմուկ քաղաքից մոտ 15 կմ հս, Արփա գետի աջ վտակի վերին հոսանքում
«Բարձրունի» լիճ	Բարձրունի գյուղից 3 կմ արլ, ծ.մ-ից 2760 մ բարձրության վրա
«Հայելի» լիճ	Արտավան գյուղից 2 կմ արլ, ծ.մ-ից 2100 մ բարձրության վրա
«Անանուն» լիճ	Կապույտ գյուղից 3 կմ հվ-արլ, ծ.մ-ից 2150 մ բարձրության վրա
«Սրբալիճ» լիճ	Մարտիրոս գյուղից 0,5 կմ արլ, ծ.մ-ից 1937 մ բարձրության վրա
«Մարտիրոս» լիճ (Վերին լիճ)	Մարտիրոս գյուղից 1,5 կմ արլ, ծ.մ-ից 2145 մ բարձրության վրա
«Ջերմուկ» («Ցուք») ջրվեժ	Արփա գետի աջակողմյան Ջերմուկ վտակի վրա
«Քարավազ» ջրվեժ	Հերիեր գետի աջակողմյան վտակի վրա, Կարմրաշեն գյուղից 2 կմ արլ
«Հերիեր» ջրվեժ	Հերիեր գետի վրա, համանուն գյուղից 2.5 կմ հս
«Գետիկվանք» ջրվեժ	Եղեգիս գետի աջակողմյան վտակի վրա, Վարդահովիտ գյուղից 0.5 կմ արմ
«Սմբատասար» բնապատմական համալիր	Արտաբույնք գյուղից 0.75 կմ արլ
Պոռշաբերդի բնապատկերներ	Գլաձոր գյուղից 6 կմ հս
«Բերդի գլուխ» ամրոցի հրվանդան	Գնդեվազ գյուղի հս-արմ եզրին
Վարդանես լճի համալիր	Ելփին գյուղից 3.5-4 կմ հս-արլ, նախկին Վարդանես գյուղի ավերակների մոտ, ծ.մ-ից 1748 մ բարձրության վրա

«Սուրբ Գևորգ» աղբյուրների խումբ	Հերիեր գյուղի հվ մասում, Հերիեր գետի աջ ափին
Մարտիրոս գյուղի բնապատմական համալիր	Մարտիրոս գյուղից 2.0 հվ-արլ, Նգար լեռան արմ լանջին
«Կորնգան եղջուրավոր»	Վարդենյաց լեռնանցք, Աղնջաձոր գյուղից 3 կմ հս-արմ

ՀՀ բնապահպանության նախարարի 05.08.2014թ.-ի թիվ 219-Ն հրամանով հաստատվել են Ջերմուկ քաղաքում գտնվող «Բախտի կամար» բնական քարե թունել» (հավելված 1) և «Ցուր ջրվեժ» (հավելված 3) բնության հուշարձանների անձնագրերը: Տրվել է դրանց նկարագրությունը, նշվել են սահմաններն ու պահպանության գոտին: Ստորև նկար 13-ում ներկայացված են հորատանցքերի և նշված հուշարձանների սահմանների տեղադիրքերը:



Նկար 13.

Բնության հուշարձանների և հորատանցքերի տեղադիրքերի սխեմատիկ քարտեզ

**Հանքավայրի պաշարները.** Ջերմուկ առողջարանի հիդրոհանքային բազայի/հենքի զարգացման մեջ առանձնացվում են երեք հիմնական փուլեր.

I-ին փուլ – 1938-1950 թ.թ.

II-րդ փուլ – 1950-1961 թ.թ.

III-րդ փուլ – 1961 թ.-ից հետո

Այդ երեք փուլերի վերջնական արդյունքը եղավ Ջերմուկի թերմալ ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի համակողմանի ուսումնասիրությունը և շահագործական պաշարների հաստատումը 01.01.1967թ.-ի դրությամբ («Отчёт о гидрогеологических, разведочных и каптажных работах на Джермукском месторождении углекислых терм Армянской ССР в 1961-1966г.г. с подсчётом запасов термальных вод на 01.01.1967 г.» Авторы: Берри И.Л., Ктикян Г.Б. и другие): Պաշարները հաստատվել են ԽՍՀՄ Պաշարների Պետական Հանձնաժողովի (ՊՊՀ) կողմից (արձանագրություն թիվ 5251, 13.10.1967թ.):

Հանքավայրի շահագործական պաշարները հաշվարկվել են «Սարահարթի» և «Կիրճի» տեղամասերի յոթ հորատանցքերով և կարող են օգտագործվել շշալցման, բուժման և ազատ ածխաթթու գազի կորզման համար: Այդ թվում՝

«Սարահարթի» տեղամասի հանքային ջրի պաշարներ

1-K հորատանցքով - A կարգի՝ 1.8 լ/վրկ կամ 156.0 մ<sup>3</sup>/օր,  
30/62 հորատանցքով - A կարգի՝ 1.6 լ/վրկ կամ 138.0 մ<sup>3</sup>/օր,  
III-K հորատանցքով - A կարգի՝ 3.2 լ/վրկ կամ 276.0 մ<sup>3</sup>/օր,  
24/62 հորատանցքով - A կարգի՝ 1.2 լ/վրկ կամ 104.0 մ<sup>3</sup>/օր:

«Սարահարթի» տեղամասի ազատ ածխաթթու գազի պաշարներ

1-K հորատանցքով - A կարգի՝ 3.67 գ/լ կամ 2.7 մ<sup>3</sup>/մ<sup>3</sup>,  
30/62 հորատանցքով - A կարգի՝ 5.63 գ/լ կամ 4.2 մ<sup>3</sup>/մ<sup>3</sup>,  
III-K հորատանցքով - A կարգի՝ 5.63 գ/լ կամ 4.2 մ<sup>3</sup>/մ<sup>3</sup>,  
24/62 հորատանցքով - A կարգի՝ 4.05 գ/լ կամ 3.0 մ<sup>3</sup>/մ<sup>3</sup>:

«Կիրճի» տեղամասի հանքային ջրի պաշարներ

7/58 հորատանցքով - A կարգի՝ 1.2 լ/վրկ կամ 104.0 մ<sup>3</sup>/օր,  
2/61 հորատանցքով - A կարգի՝ 2.5 լ/վրկ կամ 216.0 մ<sup>3</sup>/օր,  
IV-K հորատանցքով - A կարգի՝ 5.5 լ/վրկ կամ 475.0 մ<sup>3</sup>/օր:

«Կիրճի» տեղամասի ազատ ածխաթթու գազի պաշարներ

7/58 հորատանցքով - A կարգի՝ 5.8 գ/լ կամ 4.2 մ<sup>3</sup>/մ<sup>3</sup>,

2/61 հորատանցքով - A կարգի՝ 5.85 գ/լ կամ 4.3 մ<sup>3</sup>/մ<sup>3</sup>,

IV-K հորատանցքով - A կարգի՝ 2.32 գ/լ կամ 1.6 մ<sup>3</sup>/մ<sup>3</sup>,

Ջերմուկի թերմալ ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի «Սարահարթի» և «Կիրճի» տեղամասերը իրենցից ներկայացնում են ճեղքաերաքային ածխաթթվային հանքային ջրերի ջրաճնշումնային համակարգ գենետիկորեն կապված Հայոցձորի արտեզիան ավազանի վերին կավճի հասակի մերգել-կարբոնատային ջրատար հորիզոնի ապարների հետ: Հանքավայրի սնման մարզերը կապված են նրան հյուսիս-արևմուտքից և հյուսիս-արևելքից շրջափակող Վարդենիսի և Զանգեզուրի լեռնաշխաթայի լանջերի հետ:

Հանքային ջրի հիմնական ջրատար միջակայքերը տեղադրված են «Սարահարթի» տեղամասում՝ 54.5-80.4մ (հոր. I-K), 151.5-190.4մ (հոր. 30/62), 161.0-258.8մ (հոր. III-K) և 93.0-130.7մ (հոր. 24/62) միջակայքում, իսկ «Կիրճի» տեղամասում՝ 33.4-165.0մ (հոր. 7/58), 43.5-82.5մ (հոր. 2/61) և 23.0-26.0մ (հոր. IV-K) միջակայքում:

Հանքային ջրերի ջերմաստիճանը տատանվում է՝ 33.0-58.0°C, իսկ հանքայնացումը՝ 3.9-4.7գ/լ սահմաններում:

Ստորերկրյա ջրերի ռեժիմը տարեկան կտրվածքում արտահայտվում է ծախսի, ջերմաստիճանի և քիմիական կազմի կայունությամբ:

Հանքավայրի «Սարահարթի» տեղամասի հանքային ջրեր կտրած բոլոր հորատանցքերի միջև գոյություն ունի հիդրոդինամիկ կապ, իսկ «Կիրճի» տեղամասում այդ կապը չի հայտնաբերվել:

Հանքավայրի հորատանցքերը շատրվանում են հիմնականում գազլիֆտի հաշվին բացասական դինամիկ մակարդակի պայմաններում:

Հանքավայրի ջրերի քիմիական կազմի ձևավորումը տեղի է ունենում խորքում՝ երիտասարդ (չորրորդական) հրաբխային գործունեության զարգադման մարզերում: Վերընթաց եկող թերմալ հանքային ջրերը տեկտոնական խախտման գոտիներով բարցրանում են դեպի երկրի մակերես և ստեղծում են ապարների մերձմակերեսային հորիզոններում պարզ արտահայտված բարձր թերմալ անոմալիաներ իրենց բերնաթափման օջախներում:

Համաձայն ԽՍՀՄ առողջապահության նախարարության կուրորտոլոգիայի և ֆիզիոթերապիայի գիտահետազոտական ինստիտուտի կողմից 1966թ.-ին տրված կոնդիցիայի մասին տեղեկանքի՝ Ջերմուկի հանքավայրի «Սարահարթի» և «Կիրճի» տեղամասերի հանքային ջուրը համարվում է ածխաթթվային (CO<sub>2</sub>-95.0-97.0%), թույլ թերմալ և թերմալ (33.0-58.0°C), սիլիկատային (H<sub>2</sub>SiO<sub>3</sub>->75.0մգ/լ), բորային (HBO<sub>2</sub>->39.0մգ/լ), միջին հանքայնացմամբ

(3.9-4.7գ/լ), թույլ թթվայինից հիմնային (рН-6.5-7.2): Ջուրը ըստ քիմիական կազմի՝ հիդրոկարբոնատ-սուլֆատային, նատրիումային է: Լուծված CO<sub>2</sub> գազի պարունակությունը կազմում է 0.47-1.05գ/լ, իսկ ազատ CO<sub>2</sub> գազինը՝ 2.32-5.85գ/լ:

Սպեցիֆիկ միկրոկոմպոնենտների չնչին քանակի պարունակությունը չի գերազանցում թույլատրելի սահմանները:

Հանքային ջրի մանրէաբանական կազմը բարվոք է:

Հանքավայրի ջրերն իրենց քիմիական կազմով և առանձնահատկություններով մոտ են «Կառլովա-Վարի» հանքային ջրերի տիպին:

Թիվ 30/62 հորատանցքը գտնվում է Ջերմուկի հանգստավայրի «Սարահարթի» տեղամասում, «Արարատ-Մոլ և մանկան» ՓԲԸ-ի («Մոլ և մանկան» առողջարան) տարածքում:

Թիվ 30/62 հորատանցքով կտրվել է հանքային ջրի 1 ջրատար հորիզոն տեղադրված 151.5-199.4մ խորության վրա: Հանքային ջրի դինամիկ մակարդակը 9.5մ երկրի մակերևույթից ներքև է, ջերմաստիճանը կազմում է 56.6°C, ծախսը՝ 1.6լ/վրկ, հանքայնացումը՝ 4.6գ/լ, լուծված ածխաթթու գազի պարունակությունը՝ 0.54գ/լ, իսկ ազատ գազինը՝ 5.63գ/լ: Ըստ քիմիական կազմի՝ հանքային ջուրը հիդրոկարբոնատ-սուլֆատային, նատրիումային է:

Թիվ 24/62 հորատանցքը գտնվում է Ջերմուկի հանգստավայրի «Սարահարթի» տեղամասում, «Արմենիա» առողջարանի տարածքում:

Թիվ 24/62 հորատանցքով կտրվել է հանքային ջրի 1 ջրատար հորիզոն տեղադրված 93.0-130.7մ խորության վրա: Հանքային ջրի դինամիկ մակարդակը 18.52մ երկրի մակերևույթից ներքև է, ջերմաստիճանը կազմում է 55.5°C, ծախսը՝ 1.2լ/վրկ, հանքայնացումը՝ 4.7գ/լ, լուծված ածխաթթու գազի պարունակությունը՝ 0.62գ/լ, իսկ ազատ գազինը՝ 4.05գ/լ: Ըստ քիմիական կազմի՝ հանքային ջուրը հիդրոկարբոնատ-սուլֆատային, նատրիումային է:

Թիվ 2/61 հորատանցքը գտնվում է Ջերմուկի հանգստավայրի «Կիրճի» տեղամասում, Ջերմուկի հին առողջարանից 120.0մ դեպի հարավ-արևմուտք:

Թիվ 2/61 հորատանցքով կտրվել է հանքային ջրի 1 ջրատար հորիզոն տեղադրված 43.5-82.5մ խորության վրա: Հանքային ջրի դինամիկ մակարդակը 10.0մ երկրի մակերևույթից ներքև է, ջերմաստիճանը կազմում է 54.0°C, ծախսը՝ 2.5լ/վրկ, հանքայնացումը՝ 4.5գ/լ, լուծված ածխաթթու գազի պարունակությունը՝ 0.63գ/լ, իսկ ազատ գազինը՝ 5.85գ/լ: Ըստ քիմիական կազմի՝ հանքային ջուրը հիդրոկարբոնատ-սուլֆատային, նատրիումային է:

Հորատանցքերի կոորդինատներն են՝

Հորատանցքի համարը	I. CK-42 կոորդինատների համակարգով		II. ARM WGS-84 կոորդինատների համակարգով		Հորատանցքի բացարձակ բարձրությունը, մ
30/62	X = 4412038	Y = 8557488	X = 4412030	Y = 8557388	2114.0
24/62	X = 4411951	Y = 8557076	X = 4411943	Y = 8556976	2105.5
2/61	X = 4411806	Y = 8557900	X = 4411798	Y = 8557800	2075.5

#### 4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Շրջակա միջավայրը դա մարդու բնակության և արտադրական գործունեության միջավայրն է, որը պահպանության և ազդեցության գնահատման կարիք ունի:

Շրջակա միջավայրի պահպանության հիմնական խնդիրներն են շրջակա միջավայրի բնական վիճակի պահպանումը, վերականգնումը, վնասագերծումը, բնական պաշարների խելամիտ օգտագործումը, շրջակա միջավայրի վրա ֆիզիկաքիմիական, կենսաբանական, մեխանիկական, ռադիոակտիվ և այլ վնասակար ազդեցությունների նվազեցումն ու կաւմը:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը դա շրջակա միջավայրի վրա բնածին և մարդահարույց ներգործության էկոլոգիական հետևանքների վերլուծություն է՝ շրջակա միջավայրի որակի պահպանման և բնակչության էկոլոգիական անվտանգության ապահովման նպատակով: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման դեպքում իրականացվում է մթնոլորտային օդ և մակերևութային ջրերի մեջ արտանետվող աղտոտող նյութերի քանակի և բաղադրության մշտական հաշվառում և չափումներ, մշակվում են դրանց կրճատման և կանխման միջոցառումներ: Շրջակա միջավայրի վիճակի գնահատման համար սահմանվում են աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի կոնցետրացիաներ, սահմանային թույլատրելի արտանետումներ և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի նորմատիվներ:

Մարդն իր արտադրական գործունեությամբ մշտապես ազդում է շրջապատող բնության վրա: Այդ ազդեցության հետևանքով բնական միջավայրը կարող է բարելավվել (ծառատնկում, ռոռոգում և այլն), դառնալ ավելի բարենպաստ մարդու կյանքի ու գործունեության համար, կամ էլ խաթարվել, քայքայվել:

Մարդու աշխատանքային գործունեության հետևանքով շրջակա միջավայրը կարող է խաթարվել երկու դեպքում: Առաջին, երբ մարդը բնությունից կորզում է և օգտագործում է նրա տարրերը ոչ այն չափով, որքան կարելի է և ոչ այնտեղ, որտեղ կարելի է: Երկրորդ, երբ մարդը բնությանն է վերադարձնում արտադրական կամ կենցաղային այնպիսի թափոններ և այն քանակով, որ բնությունը չի կարողանում ինքնամաքրվել:

Երկու դեպքերում էլ տեղի է ունենում բնական միջավայրի էկոլոգիական հավասարակշռության խախտում, և հասունանում է էկոլոգիական ճգնաժամը, ապա և աղետը:

Ջերմուկ թերմալ ածխաթթվային հանքային ջրի «Սարահարթի» և «Կիրճի» տեղամասերի շահագործման բազմամյա փորձը ցույց է տվել, որ արդյունահանման աշխատանքների ընթացքում որևիցե տեխնածին ճնշումներ հանքավայրի շրջակայքի

մթնուլորտի, հողային ծածկույթի, բուսական և կենդանական աշխարհի, ինչպես նաև լանդշաֆտային ամբողջականության վրա չեն դրսևորվել, քանի որ, հանքային ջրի արդյունահանման ընթացքում փոշու և վնասակար նյութերի արտանետումներ չի կատարվել, իսկ կենցաղային աղբը փաթեթավորվում և տեղափոխվում է մոտակա աղբավայրի կետեր:

Ջերմուկի թերմալ ածխաթթվային հանքային ջրի հանքավայրում բացակայում են սողանքային երևույթները, մոտակայքում կան արդյունաբերական, բնակելի և տնտեսական շինություններ:

Ընկերությունն օգտվում է գոյություն ունեցող ավտոճանապարհից և ենթակառուցվածքներից՝ գազատար, ջրատար և էլեկտրահաղորդման գծեր:

Ջերմուկի թերմալ ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 30/62 և 24/62 հորատանցքերի հանքային ջրի շահագործումը «Ադամանդ-Կ» ՍՊ ընկերությունը մինչ օրս իրականացնում է համաձայն ՀՀ կառավարության 5 հոկտեմբերի 2017 թվականի N 1267-Ն որոշմանը, որը կիրառվում է բնօգտագործման վճար վճարող ջրօգտագործողների կողմից ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանված պաշարների և արտադրված ածխաթթու գազի հաշվառման նպատակով ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքերի, գազաչափերի տեղադրման և կնքման, ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանված պաշարների և արտադրված ածխաթթու գազի ծավալների վերաբերյալ տվյալների արձանագրման կարգերը և ժամկետները սահմանելու ժամանակ:

Հանքային ջրերի հանքավայրերի շահագործման բազմամյա փորձը գալիս հավաստելու, որ ջրհավաք հորատանցքերի շահագործման ընթացքում ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, հաշվի առնելով աշխատանքների բնույթը, կլիմի գրեթե զրոյական:



## 5. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

### 5.1. Ընդհանուր բնույթի միջոցառումներ

Մարդկային արտադրական գործունեությունը միաժամանակ լուրջ վտանգ կարող է սպառնալ շրջապատող միջավայրին, եթե այն իրականացվի առանց հաշվի առնելու ընդերքի, ջրային ռեսուրսների, շրջապատող միջավայրի պահպանության պայմանները:

Համաձայն ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի (հոդված 64), ընդերք շահագործողները պարտավոր են ապահովել շրջակա միջավայրի պահպանության պայմաններն ու պահանջները, իրականացնելով հետևյալ միջոցառումների իրականացումը՝

- մթնոլորտի, ջրային ռեսուրսների, հողի, կենդանական և բուսական աշխարհի պաշտպանությունն ու պահպանումը,
- բնության հատուկ պահպանվող տարածքների ռեժիմի պահպանումը,
- ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողերի ռեկուլտիվացիայի, ծառատնկման, կանաչապատման աշխատանքների իրականացումը, մշակված հանքային տարածությունների վերականգնումը,
- շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ենթարկված փաստաթղթերի պահանջների ու միջոցառումների կատարումը,
- շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված պայմանագրային պարտավորությունների կատարման ապահովումը և այլն:.

Ջրհավաք հորատանցքերի շահագործման աշխատանքները կիրականացվեն՝ հաշվի առնելով ընդերքի, ջրային ռեսուրսների, շրջակա միջավայրի և բնապահպանության ոլորտների ՀՀ օրենսդրության պահանջները, որոնք ներառում են հետևյալ հիմնական միջոցառումները.

- պահպանել աշխատանքների կատարման համար հողահատկացման սահմանված կարգը,
- բնական պայմանների խախտման բացասական երևույթների վերացում,
- բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը և շրջակա միջավայրի պահպանման համար առանցքային միջոցառումների ձեռնարկումը,
- աշխատանքների վարման անվտանգ ձևերի ընտրություն և այլն:

Ստորերկրյա ջրերի (քաղցրահամ և հանքային) հանքավայրերի շահագործման երկարամյա փորձը գալիս է հավաստելու, որ դրանց պաշարների արդյունաբերական յուրացումն բացասական ազդեցություն չի թողնում շրջակա միջավայրի վրա:

Ջերմուկի թերմալ ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի «Սարահարթի» և «Կիրճի» տեղամասերը գտնվում են ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայքի տարածաշրջանի Ջերմուկ առողջարանի տարածքում:

Հանքավայրի հիպսոմետրիկ բացարձակ նիշերը տատանվում են 2030.0-2120.0մ սահմաններում:

Հանքավայրի տարածքը գտնվում է Ջերմուկի ջրաբանական արգելավայր տարածքում: Այն բնության հատուկ պահպանվող տարածք է Արփա գետի վերին ավազանում, 2000-2500 մ բարձրություններում: Ստեղծվել է՝ հանքային ջրերի տաք աղբյուրների («Ջերմուկ» հանքային ջուր) սնման ավազանների պահպանության նպատակով: Հանքավայրի տարածքում չեն արձանագրվել ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում նշված բուսական կամ կենդանական տեսակների աճելավայրեր և ապրելավայրեր:

Աշխատանքների կատարման ընթացքում ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, հաշվի առնելով աշխատանքների բնույթը, կլիմայի աննշան և չի հանգեցնի էկոհամակարգերի վրա բացասական ճնշումների դրսևորմանը:

Աշխատանքների կատարման ընթացքում կպահպանվեն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետով սահմանված պահանջները և պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման դեպքում աշխատանքները կդադարեցվեն, այդ մասին անհապաղ կտեղեկացվի լիազորված մարմնին:

## **5.2. Շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված միջոցառումների ծրագիր**

Ջրհավաք հորատանցքերի արդյունավետ շահագործման հիմնական պահանջները հետևյալն են՝

1. Հանքային ջրի հանքավայրի արդյունավետ և երկարաժամկետ շահագործումը հնարավոր է իրականացնել միայն հորատանցքի լավ տեխնիկական վիճակի, նրանց գլխամասային սարքավորումների, չափիչ սարքերի, ինչպես նաև

սանիտարական պահպանության առաջին խիստ ռեժիմի գոտիի առկայության և պատշաճ վիճակում պահելու պայմաններում:

2. Ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի արդյունաբերական շահագործումը պետք է իրականացնել հատուկ ջրհավաք (կապտաժային) հորատանցքից կահավորված չժանգոտվող (խմելու որակի) խողովակաշարով: Շահագործման ժամանակ չի թույլատրվում շահագործվող ջրհավաք հորատանցքից ՊՊՀ-ի կողմից հաստատված պաշարների չափից ավելի արդյունահանումը:
3. Ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի հորատանցքերի շահագործումը պետք է իրականացվի հիդրոերկրաբանական պայմաններին, հանքային ջրերի հաստատված պաշարների քանակին, նրանց քիմիական կազմին, ջերմաստիճանին և ռեժիմին խիստ համապատասխան:
4. Իրականացնել սիստեմատիկ հիդրոերկրաբանական ռեժիմային ստացիոնար մշտադիտարկումներ (մոնիտորինգ) ջրհավաք հորատանցքի շահագործման ռեժիմի և տեխնիկական վիճակի նկատմամբ: Ջրհավաք հորատանցքի շահագործումը և հանքային ջրի ռեժիմի հսկողությունն իր մեջ ներառում է հանքային ջրերի քանակի և որակի նկարագիրը, նրա երկարատև շահագործման պայմաններում, ինչպես նաև հորատանցքի պահպանումը՝ սպառումից, աղտոտումից և աղակալումից:
5. Հանքային ջրերի շահագործման ժամանակ անհրաժեշտ է ապահովել ջրերի կոնդիցիոն քիմիական կազմի պահպանումը:
6. Իրականացնել հակավթարային միջոցառումներ:
7. Անբարենպաստ կլիմայական պայմանների ժամանակ իրականացնել արտանետումների կարգավորման միջոցառումներ:
8. Նախատեսվում է հարակից տարածքները չխախտել և չաղտոտել կենցաղային աղբով և այլ տեսակի թափոններով:

Այս բոլոր պահանջների կատարումը ընկերությունը կշարունակի իրականացնել հանքավայրի հորատանցքերի շահագործման ընթացքում:

Հարկ է նշել, որ հանքային ջրերի արդյունահանման համար անհրաժեշտ բոլոր ենթակառուցվածքները առկա են, գործում են: Նոր շինարարություն, հորատում, հորատանցքերի կահավորում, ենթակառուցվածքների ստեղծում, հողի և բուսական ծածկույթի խախտման որևիցե աշխատանքներ չեն իրականացվելու:

Շրջակա միջավայրի բնական բաղադրիչների վրա՝ հողի, բուսական ծածկույթի, կենդանական աշխարհի, մակերևութային ջրային հոսքերի կամ մթնոլորտային օդի վրա որևէ նոր ազդեցությունների դրսևորումներ չեն նախատեսվում:

Ելնելով այն հանգամանքից, որ ընկերության կողմից շահագործվող հորատանցքերը արդեն իսկ կահավորված է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան և խողովակաշարը կառուցված է, ուստի կարելի է փաստել, որ արտադրողականության ընդլայնման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները մեղմելու կամ նվազեցնելու համար լրացուցիչ միջոցառումների նախատեսում չի պահանջվում:

### **5.3. Հիդրոերկրաբանական և շրջակա միջավայրի մշտադիտարկումների (մոնիտորինգի) իրականացման պլան**

Հանքային ջրերի պաշարները վերականգնման առանձնահատկություն ունեն և շահագործման ընթացքում պահանջում են գուրգահեռաբար իրականացնել ջրերի որակի, քանակի, վիճակի և շահագործման ռեժիմի նկատմամբ ուսումնասիրություններ, որը կապահովի գերծ պահել ջրերը աղտոտումից, սպառումից և տեխնաձին գործընթացների վնասակար ազդեցությունից:

Ստորերկրյա հանքային ջրերի հանքավայրերի շահագործման ժամանակ նախատեսվող և իրականացվող ռեժիմային դիտարկումների նպատակն է՝

- 1) հանքավայրի շահագործման ժամանակ հանքային ջրի քանակի և որակի կայունության պահպանումը.
- 2) հնարավոր սպառման և աղտոտման բացահայտումն ու նախազգուշացումը.
- 3) ստորերկրյա հանքային ջրերի բնական ու խախտված ռեժիմների և դրանց ձևավորման օրինաչափությունների ուսումնասիրությունը.
- 4) ստորերկրյա հանքային ջրերի ռեժիմի կարճաժամկետ ու երկարաժամկետ կանխատեսումների համար տվյալների հավաքագրումը և վերլուծությունը.
- 5) ստորերկրյա հանքային ջրերի աղտոտման և սպառման աստիճանի գնահատման մասին հենակետային տվյալների ստացումը.
- 6) ստորերկրյա հանքային ջրերի շահագործվող հանքավայրերում ջրի ծախսի, ճնշման կամ մակարդակի և ջերմաստիճանի չափումների, ինչպես նաև ֆիզիկաքիմիական

անալիզների իրականացումը, ստորերկրյա ջրերի պաշարների վերագնահատման օպերատիվ տվյալների հավաքագրումը, մշակումը և ամփոփումը.

7) ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցումը, անվերադարձ ազդեցության կանխարգելումը,

8) ամփոփ տվյալների հիման վրա առաջարկությունների մշակումը և ներկայացումը լիազոր մարմնին:

